

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Կրթական.	Կրթարան թէ վարժարան.....	Տ. Փերոյիմեան
Ազգ.Ա.Յին.	Մի քանի խումբ կաւկասիոյ հայ վարժարանաց փակման մասին.....	ՊԱՐՍԿԱՍՏԱՆՅԻ Մ. ԹՕՓԶԱՆԵՂԵԱՆ
Տնտեսական.	Ամերիկայի նիւթական վիճակը.....	ՀԱՍԿԱՔԱՂ Յ. ՏՈՒՏՈՒԹԵԱՆ
Գրական.	Միջինքի պարահանդեսները Սպիտակքի յիմարանոցին մէջ ի փարկը.....	Մ. ՍԱՐԸՆԱՆ
ԳԱԽԱՌ. ՍՈՎՈՐՈՅԹԻ.	Խուլթիկ գիւղ. — Ամուսնութիւն.....	
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ.	Երբ Մշտ բարբառով.....	ՀԱՄԱՔԵՅ
ԶԱՆԱԶԱՆՔ.	Զեռքն և Զայն.....	
ՔԱՂԱՔԱԿԱՆ.	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲ. ԼՐՈՅ Արտաքին, Ներքին, Ազգային.....	

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
».....	վեցամսեայ.....	Քառ » »
Գաւառներ.....	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	».....	12 ձրանք
Թղթատարութեան ծախք ».....	».....	15 դահ. արծաթ
Մէկ թերթին Գինն է.....	».....	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրուածին կամ նամակ պէտք է ուղղել առ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՒ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա . 29 մարտ

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտայի վրայ պանքայի		110	5/8
3 » » » (վճռակն)		110	
3 » Բարսի » (պանքայի)		22	97 1/2
» » » (վճռակն)		23	05

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂՈՅ

Օսմանեան Բոնսոլիտե

	Դաշեկան
Երեկ երեկոյ քոց . (Միաց. D. Սերբ)	17 1
Պորսային գոցուեցէն վերջը »	16 38
Բերայի մէջ »	16 37
Առաւօտուն բացուեցաւ »	14 33
Բարձրագոյն գին »	16 33
Նուազագոյն »	16 24
Կէս օրին »	16 23 1/2
Փոխառութիւն 1858) A. Սերբ Գ. Կ. Ա. Ո. 30	
» 1862)	
» 1860)	
» 1863) B. » Ի. Կ. » 48	
» 1872)	
» 1865)	
» 1869) C. » Ի. Կ. » 16 20	
» 1873)	

Իւնիֆիէ Եգիպտական

Երեկ երեկուն գոցուեցաւ		69	5
Այս առտու բացուեցաւ Գ. Կ. »		69	
Կէս օրին		68	20

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօսիթէ Ժէնէրալ..... Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 15
Բաէտի Ժէնէրալ..... » » Օսմ. »	7 2
Պանք առ Գոնս..... » » » »	5 20
Սօս. Շանժէ վալէօր..... » » » »	3 35
Թրամուէյ..... » » » »	277 1/2
Բումէլիի երկաթուղի..... Զր.	41
Օպլիկատիօն առ Բրիտիթէ..... »	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի..... »	65

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի..... ՂԸ. ...	100
20 ֆրանքնոց..... » ..	87 30
Անգլիական ոսկի..... » ..	110 6
Բօլ Իմբէրիալ..... » ..	90 10
Բրիմից..... » ..	51 15
Ռուպլի թղթադրամ..... » ..	9 05
» արծաթ..... » ..	89 30
Ֆիօրին..... » ..	9 2
Մէճ. արծ. (տարբ.)..... » ..	107 18
Վէցնոց..... » ..	102 20
Հինգնոց..... » ..	102 30

Մէթալիք..... » ..	98
Պղինձ..... » ..	—
Թղթադրամ..... » ..	—

ԵՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Ընդհանուր անկում գնոց

Լոնտոն, 9 Ապրիլ, ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ գոցուեցաւ.....	94	7/8
Օսմ. » Սերբ S. բացուեցաւ.....	16	1/4
» » » գոցուեցաւ.....	15	1/4
» » » Ա.	30	
» » » Բ.	18	
» » » Գ.	15	1/4
Փոխառութիւն..... 1877.....	76	
Պանք Օթօման.....	11	1/2
Ռուսական փոխառ. 73 (գ. 4.).....	82	
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ).....	60	7/8
» առանձն. (Բրիվիլէթիէ).....	80	1/4
Տայրա Սանիէ.....	58	1/2
Տօմանիալ (փոխառ. Բօչիլա).....	78	
Հունգարական պարտաթուղթ 1877.....	—	
Փոխանկութիւն Բարիդի վրայ.....	—	

Վիեննա, 9 Ապրիլ, ժամ 4 երեկոյ

Փոխանկութիւն Լոնտոնի վրայ.....	125	20
Օսմանեան երկաթուղի.....	21	50

Բարիդ, 9 Ապրիլ, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Յրանալան Ռանթ 4 1/2 0/0..... բաց.....	107	35
» » 3 0/0..... բաց.....	76	47 1/2
Օսմանեան քոնսոլիտէ բացուեցաւ.....	16	50
» » գոցու. գ. 4.	15	75
Միացեալ պարտք Սերբ Բ.	17	
» » Գ.	15	60
» » Գ.	—	
Օսմանեան երկաթուղի.....	42	
» Բէթի բաժնեթուղթ.....	—	
Պանք Օթօման.....	543	75
Գրէտի Լիօնէ.....	520	
» Ֆօնսիէ գ. 4. Բարձրացում 1280		
Բաժնետոմս Լիօնի (գուբ. կտր.).....	1235	
Սուէզի ջրանցք.....	1970	
Ռուսական 5 0/0 1877ի (գ. 4.).....	83	
Խաղալան Ռանթ (գ. 4.).....	92	35
Եգիպտական միացեալ գոց.....	313	75
Ապանիական (արտաքին) (գ. 4.).....	56	5/8
Բրիտիթէ Թիւրք.....	367	50
50/0 Հելլենական (գ. 4.).....	340	
Զէք Լոնտայի վրայ.....	25	38

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Ապրիլ 9, ժ. 10, 4. 45	
Յրանա. Ռանթ, 4 1/2 0/0.....	107 55
Օսմանեան ».....	15 50
Եգիպտական միացեալ.....	346 (°.)

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

347 ՏԱՐԻ

1885 ՄԱՐՏ 30

ԹԻԻ 3763

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 30 ՄԱՐՏ

ԿՐԹԱԿԱՆ

ԿՐԹԱՐԱՆ ԹԵ՛ ՎԱՐԺԱՐԱՆ

(Շաբ. եւ վեր)

Առաջին յօդուածի մէջ ասացի թէ կըրթիչը պարտք ունի մշակել ու կերտարանափոխել իր ենթակայ տղայի « միտքը, կամքը եւ սիրտը, որ նրա ներքին աշխարհը, ամբողջ հոգին եւն կազմում: » Ասացի նոյնպէս թէ կրթութիւնը պէտք է լինի ո՛չ պատահական եւ ո՛չ առանց ծրագրի:

Բայց ո՞վ պէտք է տայ այդ ծրագիրը. չէ՞ որ իւրաքանչիւր երկիր, իւրաքանչիւր բաղադր, իւրաքանչիւր կրթարան եւ նոյն իսկ իւրաքանչիւր կրթիչ կարող է իր քմաց ու ճաշակի յարմար, իր յատուկ ծրագիրը ունենալ: Մտադիր չլինելուց առաջ հարկաւոր է ունենալ մի կատարելատիւ, մի իշխան եւ այդ իդէալը պէտք է լինի ոչ այս ինչ կամ այն ինչ ազգի ու քաղաքի, այլ համայն մարդկութեան զաւակների համար:

Այդ օրինակ մի իդէալ կարող է մեզ տալ այն գիտութիւնը, որ հետաքրտելով մարդու բունելը գիրքը հասարակութեան մէջ, որոշում է մէն մի անհատի համապատասխան յատկութիւններն ու պարտականութիւնները: Արդ գիտութիւնն է քառասուն տարեկանը, նրա քարոզած իտէալը՝ քառասուն տարեկանը: Ապարդիւն ու վնասակար է մի կրթութիւն, որին ենթակայ սաները չեն ձգտում դէպի առաքինութիւն. ինստակութեան ու աջակցութեան ա-

ռաջնորդ է նա, երբ նրանով մկրտուած երիտասարդները չեն փախում համաձայն իրենց ուսած գաղափարների. խախտաւ ու մտատանջող է նա, երբ զայն ստացող արածներ արամադիր են անդիտակցական, չափազանց բարի լինելու. մէկ խօսքով՝ ո՛չ ինքն չարը եւ ո՛չ յիմար բարին չունին մասն ու բաժին առաքինութեան մէջ: Առաքինութեան տիրողը կարող է սլակել այն մարդու ճակատը միայն, որ չունի երբէք կամ, որ չէ համապատասխան իր անկեղծ ու խոհուն դատողութեան եւ չունի երբէք դատողութիւն, որ չէ ձգտում վաղ թէ ունանալու իմաստ կամք՝ այսինքն փոքր դառնալու: Եւ տարակոյս չ'կայ որ այդ կամքն ու գործը առաքինական լինելու համար, պէտք է որ նրանց համապատասխան դատողութիւնըն էլ առաքինի կամ աւելի ճիշդ է ասել այս դէպքում՝ քառասուն գաղափարների վրայ հիմնուած լինի:

Ասածներէն պարզ է թէ իւրաքանչիւր կրթիչի աշխատութիւնը անհրաժեշտապէս կրկին է. նա ոչ միայն պաշտօն ունի տղաներին անհուն աշխարհի երեւոյթներն ու գաղափարները աւանդելով, նրանց դատողութիւնը մարդել, այլ պարտաւոր է այդ գաղափարների ու դատողութեան համաձայն նրանց մէջ համապատասխան կամքի մղում գոյացնել: Սոյն օրինակ կրթական գործողութեամբ նա առաջին դէպքում լոկ քառասուն տարեկան, իսկ երկրորդում նաեւ քառասուն տարեկան է: Այսպիսով Ասուցում եւ Դաստիարակութիւն կրթութեան երկու անհրաժեշտ տարրեր, նրա գործիչներն են (facteur): Եւ աւելորդ է ասել որ Ասուցումը պէտք է անպատճառ նախորդէ դաստիարակութեան, զի աշակերտի խելացի կամքը բանի մը վրայ հրաւիրելու

համար անհրաժեշտ է հաստատուն յենակէտ մի ունենալ :

Սակայն կրթիչի գործը դեռ չը ընցաւ : Որքան էլ նա քրտինք թափէ իր , մանաւանդ անչափահաս , աշակերտները իրենց մտաւոր պաշարի համեմատ կամք յայտնելու մէջ վարժեցնելու համար , անկարելի է որ նրանք գոհացում տան յարաժամ այդ մասին , իրենց տարիքից կամ չըջապատող հանգամանքներից ստիպեալ : Եւ աւելի շոշափելի ու բնական է այդ կողմից մանաւանդ փոքր տղաների վարմունքը , որոնք դեռ եւս չը գիտեն ու չունին այն դատողութիւնը , խոհականութիւնը , որի համապատասխան գովելի կամքեր յայտնելու պարտաւոր լինին : Եւ այն ժամանակ ներանք անում կամ տրամադիր են անելու բաներ , որ շատ հեռու են խելացի ու բարոյական կամք լինելուց , այսինքն այն , որ կրթիչների բառգրքով չարութիւն ու անկարգութիւն են կոչուում : Արթիչը ի հարկէ հրաջներ գործելու համար չէ . նա չէ կարող իւրաքանչիւր ակնթարթում եւ իւրաքանչիւր հասակի տղայի համար մի մոգական ուսուցում ու դաստիարակութիւն կատարել . անկարգութիւնները բոլորական գործեր են , իսկ բոլորակապէս՝ մի անծանօթ փաստաբանութեամբ համոզել ու խրատել տղաներին անկարելի է : Այդ տեղ ուսուցիչը պէտք է վարուի ոչ ըստ ուսուցման եւ ոչ ըստ դաստիարակութեան կանոնների , այլ նա պէտք է հրաժայէ , պահանջ ու պահէ : Արթիղական այս երկրորդ գործողութիւնն էլ մանկավարժական լեզուով կարողութիւնն է յորջորջվում , գործողութիւնն որ սխտի կատարուի աշակերտին շարժմանը դասպելու համար՝ մանկավարժական գիտութեան մէջ մշակուած խելացի կանոններով :

Այսպէս ուրեմն Ուսուցում , Դաստիարակութիւն եւ Կարողութիւն , — ահա ստիկ այն երեք հիմնական առանցքներ , որոյ շուրջ պիտի դառնայ ու պտըտի մեր նոր սերնդի կրթութեան հսկայական գործը : Հետեւապէս մէկ էակ՝ որ լոկ ուսուցիչ կամ լոկ դաստիարակիչ եւ կամ լոկ կառավարիչ է՝ նա չէ երբէք այն , ինչ որ մանկավարժական լեզուով կրթիչն անուանուում : Զի նա , որ լոկ ուսուցիչ է , որքան էլ մեծ գիտնական լինի՝ հասարակութեան պատուհաս

խնաստակներ արտադրելով է պարապած եւ նա որ լոկ դաստիարակիչ է՝ իր բոլոր ջանքերը « յիմար բարի » ներ պատրաստելուն է նուիրած . եւ նոյնպէս նա որ լոկ կառավարիչ է՝ մարդ կութիւնը սարսափեցնող բարոյական հրէշներ դուրս հանելու գաղափարով է մոլորուած : Իսկ կրթիչ սուրբ տիտղոսը եւս կը դրոշմեմ միմիայն այն քաջ մարդու ճակատին , որ ամեն ժամանակ , ամեն քայլափոխին եւ ամեն բոլորէ՝ է , միանուագ եւ ուսուցիչ եւ դաստիարակիչ եւ կառավարիչ : Եւ թո՛ղ ապրին , ծաղկին ու բարգաւաճին այդ իսկական կրթիչները՝ ո՛ր եւ ո՛ր ազգի մէջ կ'ուզեն գտնուին նոքա . . . :

Բարի ընթերցողներիս համբերութիւնը այսչափ չարաչար գործածելուց յետոյ դանք վերջապէս մեր գլխաւոր առարկային . որոշենք վերջացնենք իսկական նշանակութիւնը այն մի խումբ տատանող բառերի , որ կըրթական գործունէութեանն են վերաբերում :

— Ծիծաղ , ածապարում է ընթերցողը , միթէ պէտք կ'այլ այլևս նոր որոշումներ անելու , երբ բոլոր հանգոյցները բացուեցան : Այո՛ , բացուեցան , հաստատում եմ ես : Ուստի սխալ է կոչել մի կրթական հիմնարկութիւն՝

Ուսումնարան , զի նա լոկ ուսուցանելու , այսինքն խնաստակներ բազմացնելու պարտաւորութեամբ չէ հաստատուած :

Վարժարան , զի կրթութիւնը կոչկարութիւնն է . դա շատ կոպիտ ածական է կրթութեան լայն գաղափարի համար . վարժեցնելը արհեստաւորի գործ է :

Դպրոց եւ դպրանոց , զի դրա այլեւս միջին տարերում Հապրելով , դատապարտելի են եթէ լոկ դպրութիւն սովորացնելու խորհրդով են հիմնուած :

Վարժապետանոց , զի այդ մահացու մեղքերից ամենամահացուն է :

Ճեմարան , զի Պէրիկլէսի դարը Յունաստանի մէջ անցնելուց յետոյ , անցան եւ հին ժամանակների « բարի » կարգերը . այսօր դէթ առողջութիւնը անվտանգ պահելու չափ ճեմել չըկայ մեր կրթարաններում :

Դոցա համեմատ պէտք է հասկանալ նա եւ ուսուցիչ , դաստիարակ , վարժապետ , կառավարիչ ու վերահաս բառերի սխալ գործածութիւնը :

Այդ անուններից կարելի է անսխալ ըն-

դուռնել միմիայն կառավարչի պաշտօնը այն դէպքում, երբ նա լոկ օգնական է կրթա-
րանի գլխաւոր կրթիչին՝ նրա կառավարչա-
կան (կարգապահական) եւ ոչ համայն կըր-
թական գործում:

— Հասկա՞ծ ե՞ք, ածապարում է դարձ-
եալ անհամբեր ընթերցողը:

— ԿՐԹԱՐԱՆ ու ԿՐԹԻՉ, — ահա՛ իմ
բաղցր պատասխանը:

Դարձնում եմ իմ պաշտօնակիցներին, գը-
րողներին եւ առ հասարակ կրթութեան բա-
րեկամներին ուշադրութիւնը այդ կարե-
ւոր խնդրի վրայ: Մարդու մի գործունէ-
ութեան ուղղութիւնն ու արժէքը քննադա-
տելու համար հարկ է նախ նրա պաշտօնի
ու կոչման էական նշանակութիւնը որոշել:
Նրբ մի անձ հրաւիրւում է այս ինչ հիմ-
նարկութեան մէջ ուսուցչի, վարժապետի
կամ կառավարչի պաշտօնով, տարակոյս չը-
կայ որ նրանից, ոչ մէկ աշխարհի իրաւա-
բանական օրէնքներով, չենք կարող ուրիշ,
աւելի իդէալական արդիւնքներ պահանջել:
Եւ միթէ՞ միւս կողմից անձնիւր անհատ որ
ձգտում է այս ինչ պաշտօնի, չէ՞ տեսնում
իր պատրաստութիւնները սոսկ իր ապագայ
կրթիչ տնտրոսի համեմատ:

Մեր մէջ մինչեւ այժմ էլ պահուած է
սովորութիւն՝ ստորին աստիճանի կրթա-
րանները նախաընթաց կոչելով, բարձրա-
դասիները հասարակ յորջորջել . . . ահա՛
մի տխուր հանգամանք. կարծես թէ մարդ-
մանուկ հասակում միայն կրթութեւն ար-
ժանի համարուելով, այլեւս չունի նոյն կա-
րիքը պատանեկութեան մէջ: Նոյնպէս ոչ
նուազ տխուր էր եւ այն հանգամանքը, որ
սրանից մօտ երեք տարի առաջ Թիֆլիսում
սկսեց հրատարակուել Կովկասի ամենաձե-
ւընհաս կրթիչների ձեռքով մի հասարակ-
այն-մանկագրական տնտրութիւն՝ Վարժապետ ա-
նունով:

Ահա ամիսներից ի վեր պատրաստութիւն
եմ տեսնում Վասպուրականի ժողովրդի մէջ
օրինաւոր կրթութեան գաղափարը հիմնա-
ւորապէս մարմնացնելու համար՝ հրատարա-
կել այնտեղ մէկ մանկավարժական ամա-
դիր կամ չաբաթաթերթ՝ Կրթապետ պաշտելի
անունով:

Վասպետը եւ տեսնենք թէ ի՞նչ արձա-
գանք պէ՛տք է գտնէ այս իմ առաջարկը
անխաբար կրթութեան բարեկամների սըր-
տերում:

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՅ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՔ.

ԿԱՆԿԱՍՈՑ ՀԱՅ ՎԱՐԺ. ՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Մենք առ այժմ չենք իմանում, թէ աղ-
գային ուսումնարանների փակման առթիւ
ի՞նչ են մտածում ամենուրեք հայ հասա-
րակութիւնները, մանաւանդ Կովկասում
եւ Անդրկովկասում. նոյնպէս յայտնի էլ
չէ եւրոպական օտար մամուլի կարծիքը,
եթէ միայն մի կերպ նրանց յայտնի է այս
եղելութիւնը լրագիրներից. միայն թէ այժմ
ամեն կողմից սարսափելի տխուր լուրեր է
առնում հայ մարդը: Հայ մամուլը լւա՞ծ է .
ուրա մամուլը, պաշտօնական եւ մասնաւոր,
պետութեան շահերին հըր եւ դորանից
վերծ, ահա ի՞նչ սկսած է խօսիլ: Թիֆլիսի
«Կովկաս» ուրա պաշտօնական թերթը, եւ
Պետերբուրգի կէս-պաշտօնական նկատուած
«Նօվօէ Վրէմիա» աղղեցիկ թերթը, ան-
կասկած, բաւականին աննպաստ կերպիւ են
խօսում հայ հոգեւորականութեան բռնած-
ընթացքի վերայ: Այդ թերթերը, ինչպէս
իրանց ուղղութեան ջերմ պաշտպան, ու-
սումնարանների փակումը բոլորովին արդա-
րացի են գտնում, քանի որ բացարձակա-
պէս այդ յոյժ կարեւոր խնդրի վերայ մի-
անգամայն միակողմանի են նայում եւ ժա-
մանակ առժամանակ էլ միամիտ ընթեր-
ցողներին ուսումնարանների այդ փակումն
նորանով են բացատրում, ի՞բր է հայ բար-
ձրագոյն հոգեւորականութիւնը դէ՞մ էր
աղգային ուսումնարաններում ուրա լեզուի,
պատմութեան եւ աշխարհագրութեան դա-
սաւանդութեանը, եւ հայ հոգեւորա-
կանութիւնը այդպէս վարուելու համար ոչ
էրեւոյ պարտաւոր «նէր»: «Նօվօէ Վրէ-
միա» ի խմբագիր, յայտնի հրապարակախօս
Սուլժորինը մարտի 14 թուահամարում այս
առթիւ ահա ի՞նչ ասում է. «Հայերը ապրե-
լով Ռուսիայի սահմաններում ու պետու-
թեան բոլոր բնակիչների մի մասը կապե-
լով, միայն օգուտ ունին իւրեանց տէրու-
թեան (ուրա) լեզուն, պատմութիւնը, եւ
աշխարհագրութիւն սովորելու մէջ: Այսպէս
ստուած, ուսացնելու համար առարկելն

անգամ օտարոտի է թւում: Ապա ի՞նչպէս է բացատրւում հայ հոգեւորականութեան այս յամառումը, ի՞նչ նպատակների է նա հետեւում. . . »: Այնուհետեւ սորա իբր պատասխան, շարունակում է. « Պաշտօնական բացատրութիւնն այս հարցերի առթիւ ոչինչ չի ասում, ցուցմունքներ չէ անում, բայց նա ներշնչուած է այն համոզմունքով թէ՛ հայ հասարակութեան լուսադոյն մասը խելացի, չրջահայեաց է եւ նոյն իսկ այդ հիման վերայ նա չէ կորուզ համերաշխ լինիլ իւր հոգեւորականութեան հետ, եւ թէ՛ այն համոզմունքը իրականութեան ճիշդ տեղեակ լինելու թելադրութիւնն է. . . »: Այսպիսի լեզու գործածելու պատճառը ահա ի՞նչ է. « Առկա » թերթը մի առ մի մանրամասնօրէն օրէնքի տեսակէտից խնդիրն պարզելէ զինի կառավարութեան արդի ցանկութիւնը սապէս է յայտնում (որը կրկնում է եւ Նօվօէ Վրէժիա) »:

« Հայ հոգեւորականութիւնը 1884 թ. 16 փետրուարի օրէնքը կատարելուց չեղուելով, արդէն ինքնայոժար հրաժարուեց իւր վրայ դրած բարձր պարտականութիւնից հսկելու եկեղեցական ուսումնարաններին վրայ. դոցանից շատերը պահպանում էին գլխաւորապէս հասարակութեան ծախսով. այդ հիման վերայ, եթէ հայ հասարակութիւնները ցանկանում են իւրեանց որդւոց բարձրութեան համար ջանալ բանալու՝ տեղական ուսումնարանական վարչութեան միջոցաւ՝ փակուած եւ փակուելու ուսումնարանների փոխարէն՝ մասնաւոր ուսումնարանական հիմնարկութիւններ ընդհանուր հիմունքների վերայ, այն ժամանակ այդ տեսակի ուսումնարաններ կարելի է բանալ երրորդ, երկրորդ եւ առաջին կարգի. սոցանից առաջին (այն է երրորդ) կարգի ուսումնարանները, ուսման ծաւալով, համապատասխանում են սկզբնական մի եւ երկու դասարաններից բաղկացած դպրոցներին. երկրորդ կարգինը՝ պրօգրիմագեաններին (չորս դասարան ունեցող ուսումնարաններին), երրորդ կարգինը՝ գիմնազիականներին (ութ դասարան ունեցող միջնակարգ ուսումնարաններին. որտեղից առ հասարակ համալսարան են մտնում): Պատաւանդութիւնն կարելի է տեղի ունենալ եւ հայ լեզուաւ Բոյաբոյսած դասադրեքով,

բայց պահպանելով այն պայմանները, որոնք պահանջւում են թէ՛ ուսու լեզուի դաւանութեան, եւ թէ՛ Ռուս պատմութեան ու աշխարհագրութեան վերաբերմամբ: Անկասկած, այս տեսակի ուսումնարաններ հիմնելու համար հոգալու է հայ հասարակութեան այն խելացի մտածող մասը որին թանկ է նոր սերունդի ապագայն եւ որը անձնուէր է պետութեանն եւ ներշնչուած յարգանքով դէպի պետութեան օրէնքները »: Մենք առաջմի, նպատակադարմար ենք գտնում դեռ քաղաքացիներ անել այդ ուսու թերթերից եւ ապա յայտնել մեր կարծիքը, հայեացքը. « Նօվօէ Վրէժիան Փահլաւի հայ ուսումնարանէի վերնագրով առաջնորդուն այսպէս է սկսում. « Հայ ուսումնարանների փակումն, տպաւորութիւնն է թողել ոչ միայն Առկաում, այլ սորա համար խօսում են եւ Պետերբուրգում. բայց խօսւում է աւելի շատ հասարակութեան մէջ, քան մամուլի. ինչպէս մշտ այսպիսի դէպքերում, դործը, խնդիրը քօշարկւում է մի տեսակի դաղնիքով. արտասովոր խնդիրներու սիրահարները գլուխները շարժում են շատ խորհրդաւոր կերպիւ, իբր թէ՛ այո, այնքան մի դատարկ-հասարակ բան չէ, որքան կարծում էք. խորագէտ քաղաքագէտները ամբողջում են երեւոյթները ու եթէ ոչինչ չեն ասում հայկական յեղափոխութեան մասին, այդ թերեւս սովոր չ'լինելով՝ միտքները այս երկու բառը՝ « Հայեր » եւ « յեղափոխութիւն »: Իսկապէս խնդիրը շատ հասարակ մի բան է. Հայկական յեղափոխութիւն, փառք Աստուծոյ, չ'կայ. բայց անկասկած տեղի ունի հայ հոգեւորականութեան մեքենայագործութիւնը, եւ այնպիսին որը նրան պատիւ չէ բերում եւ թէ որը այդ բանով շէքշէք է Ռուսիայէն դուրս մի տեղից »: Առկա լրագրի տեղեկութիւնների վրայ հիմնուելով, Սովորինը մի առ մի իւր տեսակետէն բացատրելով 1873 թ. 22 նոյեմբերի օրէնքից՝ սկսած յետագայ տնօրինութիւնները եւ ամեն մի կէտում հայ հոգեւորականութեանը մեղադրելով, այսպէս է վերջացնում իւր գրութիւնը.

« Ահա այսպէս է հայ ուսումնարաններին փակման պատմութիւնը. ոչ միայն ուսու կառավարութեան եւ հայ հոգեւորականու-

թեան մէջ 12 տարի շարունակ տեղի ունեցած մաքառման մանրամասնութիւնները, բայց եւ նոյն իսկ նորա հաշիւները տեղի ունենալու, կարող են զարթեցնել խորին զարմացք եւ այդ հասկանալի է միայն, որպէս ռուս իշխանութեան արտասովոր երկար ատեն համբերութեան ու ներողամտութեան մի արդասիրք. այո՛, իշխանութեան կողմն է եւ իրաւունք եւ ոյժ, եւ կառավարութեան պահանջումների ճշմարտութեան ու օգտաւէտութեան համոզմունքը ինչպէս պետութեան նոյնպէս եւ նոյն իսկ հայ ազգաբնակչութեան շահերի վերաբերեալ. հակառակ կողմում կարելի էր տեղի ունենալ միայն յաւանութեան համար անպատիժ մնալու համոզմունքը եւ ռուս իշխանութեան կողմէն զիջման յոյսը, բայց եւ այնպէս, այն կողմը 12 տարի անիրաւարար տիրապետած էր իւր վաղեմի բռնած դիրքը: Ո՞ր երկրում կարող է տեղի ունենալ իրաց այս վիճակը, որ ամեն միջոցներով միանգամայն անպահովուած զօրաւոր պետութեան բարձրագոյն կառավարութիւնը շարունակ ստիպուած լինէր հաստատել կրկնել իւր պահանջումները, որոնք հիմնուած էին պետութեան օգտի եւ հասարակութեան բարօրութեան տեսակէտների վերաբերեալ. ճշմարիտն ասած, սա վեհանձնութեան եւ ներողամտութեան ծայրահեղ սահմանն էր: Այս 12 տարւոյ մաքառման մանրամասնութիւնները, եթէ միայն առիթ էլ են տալիս կշտամբել ռուս իշխանութեանը, բայց ոչ բնաւ բռնաբարութեան մէջ, տեւի եւս ոչ անուշադրութեան մէջ հայ ազգայնութեան իսկական չարիքների եւ օգտի վերաբերմամբ: » Խնդիրը աւելի պարզեւ համար « Մասիս » ի ընթերցողներին, հարկ ենք դնում բացատրել, որ 1875 թ. 22 նոյեմբերից սկսած Ռուս կառավարութեան օրէնքը Հայ ուսումնարանների կառավարելու վերաբերմամբ մինչեւ այս տարուայ վերաբերելի 18ի օրէնքը սորանում է կայանում:

Հայոց ազգային երկսեռ դպրոցները, բացի Ս. Էջմիածնի ձեմարանից ու հինգ թեմական դպրոցներից—սեմինարիա կոչուածները—անուշադ մնալու են հայ հոգեւորականութեան իրաւասութեան տակ, բայց իրօք գործնականապէս այդ ազգային ու-

սումնարանները ենթարկւում են ռուս կառավարութեան ուսումնարանական իշխանութեանը. այս ուսումնարանների ուղղութիւնը, այսպիսով, անտարակոյս, չեղւում է իւր սկզբնական ուղղութիւնից ու հայ դպրոցներ լինելուց այնքան հեռու են մընալու, որքան է այս օրս Մոսկուայում լազարեան հայ ձեմարանը հայ ձեմարան լինելուց. եւ ահա ինչո՞ւ:

Ամեն մի հայ ուսումնարանում, լինի նա տղայոց թէ օրիորդաց մի եւ նոյն է, բացի կրօնից, մնացեալ բոլոր առարկաների դասաւանդութեանց վրայ հանրային կրթութեան տեղական իշխանութիւնները (օրդան) պէտք է միշտ հսկեն. այսպիսով արդէն յայտնի է նախօրէն թէ ինչպէս օրէ ցօր առարկաների թուից դուրս կը ձգուին Հայաստանի աշխարհագրութիւնը (ուրեմն, ո՞ւր մնաց «Բալթիկ» դասադրքի մասին խօսիլ), Հայոց պատմութիւնը եւ: Ուսումնարանական շրջանի հոգաբարձուն միշտ իրաւունք ունի առարկելու, այս ինչ ուսուցչին արձակելու, քանի որ օրէնքը պարզօրէն ասում է թէ պէտք է հեռացուին պաշտօնից այն դասատուները, որոնց գործունէութիւնը մի ու եւ է պատճառաւ անհամապատասխան է նրանց կոչման, այն է ուղում են ասել, թէ նա որ միշտ սոսկ տէրութեանը հըլ պաշտօնեայ չնկատուի, այդպիսին պիտի արտաքսուի. հայ ուսուցչի բարոյական կողմը միշտ պատրուակ է դառնալու անբաւականութիւնների, ինչպէս եւ նորա ուսման ատիւժանը. հայ ժողովուրդը իւր արդի պայմաններին համաձայն ո՞րտեղից դնել հայ դասատուներ ամեն մի ուսումնարանի համար, որ առ նուազն դիմնադիւն աւարտած լինի. այդպիսով մենք էլ ո՞րտեղից կարող ենք հայ լեզուի ուսուցիչներ ունենալ քանի որ պետական ուսումնարաններում դասընթացքներ աւարտողները բնաւ լաւ հայերէն չգիտեն եւ ո՞ր տեղից էլ խնաման, երբ որ հայերէն այնտեղ չեն ուսանում բացի այս, իրաւունք չի տրոււմ եւ օտարահայտակ հայ դասատուին պաշտօն վարել հայ ուսումնարանում. այնուհետեւ ամեն մի ուսումնարան բանալիս, փակելիս միշտ ստիպուած պէտք է լինի հայ հոգեւորականութիւնը ամիսներով գրադրութիւններ մէջ մտնել տեղական ու-

սուսմարանական վարչութեան հետ . թեմական տեսուչները, առարկվում է որ սոսկ հոգեւորականներից նշանակուին, այն ինչ ներկայ հանգամանքներում, այդ եւս մեզ չէ յաջողվում . եւ թէ ինչո՞ւ անպատճառ այդ բոլորը մի ո եւ է սահմանափակ շրջանակի մէջ դնել, ահա ինչ տեսակէտներէ ստիպուած : Ս. Սինոդը բարուոք համարեց ոյժի առաջ գինաթափ չլինել, որդէս ցաւօք սրտի յիշած է ուս հրապարակաբոս Սուվորինը, քան գիտակցաբար ազգի դարեւոր իրաւունքները ինքնայօժար օտարին յանձնելու եւ այդպիսով իրան կոչման դէմ դործելու . դորան պատրուակ բռնելով, իբր թէ Ս. Սինոդը չէր համաձայնում հայ ուսումնարանների մէջ ուսու լեզուի, պատմութեան ու աշխարհագրութեան դասաւանդութիւն կամ թէ անուշադէր լինելուց այդ առարկաների յաջող անցնելու համար . դա լոկ դրաւրտութիւն է, ըստ որում՝ ո՛չ միայն Ռուսահայաստանում, այլ նաեւ Պարսկաստանում անդամ Հայերը իրանց յօժար կամբովը՝ Ռուսաց լեզուի դասաւանդութիւնն են մտցնում հայ ուսումնարաններում . Հայերը երբէք չեն մերժել մինչեւ անգամ իւրեանց որդոց սովորացնել եւ այլ առարկայներ, որոնք այժմ չեն դատախօսվում հայ ուսումնարաններում, միայն թէ հայ ուսումնարանների ուղղութիւնը, ընթացքը արգելք չգառնայ հայ մանկտիին ուսում, միայն եւ եթ ուսում, իբրեւն ստանալու : Ինչո՞ւ հեռի գնանք . իրանք ուս հասարակութիւնները երբէք բաւական չեն իւրեանց պետական ուսումնարաններում տիրող ուղղութիւնից եւ գըտնում են որ այս վերջինը բնաւ համադատասխան չլինելով արդի գիտութեան մանկավարժական կանոններին, միայն եւ եթ թթացնող ազդեցութիւն է ներշնչում ուսանող մանկտիի մտքի ու հոգու վերայ, այն ինչ մեր ազգային ուսումնարանները բաւականին լուրջ ըմբռնած գոյով դաստիարակութեան ձեւը, եղանակը եւ մի որոշ ազատ ուղղութիւն ունենալով, թարմ եւ զուարթ ոյժեր են թողնում մարդկութեանը եւ հայութեան այդ գիտութեան տաճարի շէմքից . ուրեմն, քանի որ Հայոց ուսումնարանները աւելի բարեկարգ վիճակի մէջ են գտնվում քան պետական ուսումնարանները, նշանակում է որ ուսու կառավարութեան ակնարկած բարեկարգութիւնը եւ ոչ մի նշանակութիւն չունի, այլ միայն թէ դա՛ մի կերպ առիթ է ներկայանում կորզել մի խեղճ ժողովրդի ուսում, լուսաւորութիւն . արտադրող հիմնարկութիւնները : Մէկ խօսքով, Կովկասու ուսումնարանական շրջանի հոգաբարձու Եանովկին, այդ խորագէտ ուսու պաշտօնեան, վերջերս անձամբ այցելելով Հայոց ուսումնարանները ամենուրեք, ակն յայտնի տեսաւ թէ հայ դպրոցները մինչեւ որ աստիճանի բարեկարգ վիճակի մէջ են գտնվում եւ ուսու լեզուի, պատմութեան եւ աշխարհագրութեան դասաւանդութիւնն ո՛րքան բարեկարգօրէն է հոգացվում, բայց եւ այնուամենայնիւ այդ գիտութեան վայրերը, ուր բարեյաջող պայմանների մէջ կրթութիւն էր առնում հայ մատաղ սերունդը, փուշ երեւալով կառավարութեան աչքին, հարկ էր օր առաջ փակել, գէթ դորանով հասած լինէին իրանց ստոր նպատակին : Ինչ վերաբերում է կառավարութեան բացատրութեան այն կէտին, որ առաջարկվում է փակուած եւ փակուելու ուսումնարանների տեղ նորերը բանալ՝ ուսու կառավարութեան հովանաւորութեան տակ, թէեւ մեծամեծ իրաւունքներ էլ է առաջարկվում, այնուամենայնիւ հասարակութիւնը պէտք է հեռու մնայ այդ բանին միջամտելու . նախ՝ դորանով ուսու կառավարութեան գլխաւոր ցանկութիւնն է հայութեանը մի ջօշտիկի հարուած հասցնել, վար ձգել միանգամայն դարերով գոյութիւն առած հայ հոգեւորականութեան կոչումը, նորա նշանակութիւնը, հեղինակութիւնը հայ ժողովրդի բարօրութեան այլ եւ այլ ասպարէզներում, որից, առաջ է դրու մի տեսակ երկարատեւութիւն հայ կղերի ու հայ ժողովրդի մէջ երկրորդ, որ այդ տեսակ ուսումնարանները հայ հասարակութեան բնաւ ձեռնուղ չեն չափ տեսակէտից . նախ, որ դժբաւերբէք չեն փոխարինի հայ մարդին հայ ուսումնարանները, քանի որ օտարն է թէ՛ բաց անողը ու թէ՛ կառավարողը, թէեւ միայն խեղճ հայ ժողովրդի փողով, եւ թէ՛ այդ ուսումնարաններում գծած ծրագիրը մի քանի տարիէն՝ գինի այն կերպարանքը կ'առնէ, որ հայ հասարակութեան ծախսով հայ ուսումնարանը բնաւ ոչ մի բանով չի

նարանները, նշանակում է որ ուսու կառավարութեան ակնարկած բարեկարգութիւնը եւ ոչ մի նշանակութիւն չունի, այլ միայն թէ դա՛ մի կերպ առիթ է ներկայանում կորզել մի խեղճ ժողովրդի ուսում, լուսաւորութիւն . արտադրող հիմնարկութիւնները : Մէկ խօսքով, Կովկասու ուսումնարանական շրջանի հոգաբարձու Եանովկին, այդ խորագէտ ուսու պաշտօնեան, վերջերս անձամբ այցելելով Հայոց ուսումնարանները ամենուրեք, ակն յայտնի տեսաւ թէ հայ դպրոցները մինչեւ որ աստիճանի բարեկարգ վիճակի մէջ են գտնվում եւ ուսու լեզուի, պատմութեան եւ աշխարհագրութեան դասաւանդութիւնն ո՛րքան բարեկարգօրէն է հոգացվում, բայց եւ այնուամենայնիւ այդ գիտութեան վայրերը, ուր բարեյաջող պայմանների մէջ կրթութիւն էր առնում հայ մատաղ սերունդը, փուշ երեւալով կառավարութեան աչքին, հարկ էր օր առաջ փակել, գէթ դորանով հասած լինէին իրանց ստոր նպատակին : Ինչ վերաբերում է կառավարութեան բացատրութեան այն կէտին, որ առաջարկվում է փակուած եւ փակուելու ուսումնարանների տեղ նորերը բանալ՝ ուսու կառավարութեան հովանաւորութեան տակ, թէեւ մեծամեծ իրաւունքներ էլ է առաջարկվում, այնուամենայնիւ հասարակութիւնը պէտք է հեռու մնայ այդ բանին միջամտելու . նախ՝ դորանով ուսու կառավարութեան գլխաւոր ցանկութիւնն է հայութեանը մի ջօշտիկի հարուած հասցնել, վար ձգել միանգամայն դարերով գոյութիւն առած հայ հոգեւորականութեան կոչումը, նորա նշանակութիւնը, հեղինակութիւնը հայ ժողովրդի բարօրութեան այլ եւ այլ ասպարէզներում, որից, առաջ է դրու մի տեսակ երկարատեւութիւն հայ կղերի ու հայ ժողովրդի մէջ երկրորդ, որ այդ տեսակ ուսումնարանները հայ հասարակութեան բնաւ ձեռնուղ չեն չափ տեսակէտից . նախ, որ դժբաւերբէք չեն փոխարինի հայ մարդին հայ ուսումնարանները, քանի որ օտարն է թէ՛ բաց անողը ու թէ՛ կառավարողը, թէեւ միայն խեղճ հայ ժողովրդի փողով, եւ թէ՛ այդ ուսումնարաններում գծած ծրագիրը մի քանի տարիէն՝ գինի այն կերպարանքը կ'առնէ, որ հայ հասարակութեան ծախսով հայ ուսումնարանը բնաւ ոչ մի բանով չի

դանազանուի արքունի այլ ուսումնարաններից • այդ հետեւանքին դալու , ստիպում է մեզ Մոսկուայի Լազարեանց տոհմի հայ ճեմարանի արդի դրութիւնը , չնայելով դեռ նրա չափ կողմից խի բարեյաջող պայմաններու մէջ գտնուելուն • վերջապէս , մեր կարծիքով , այս դէպքում սկսողական հարց վարմունքը , գովելու արժանի է • նոքա դորձեցին այնպէս , որպէս թեւադրում էր նոցա խիզը • այսպէս թէ այնպէս հայ կը դերը ցոյց տուեց իւր անձնութեան թիւնը եւ մենք դովում ենք : Յանկայի է հայ հասարակութիւնն էլ իւր դորձունեութեամբ ոչ պակաս անձնութեան ցոյց տար դէպի ազգի , եկեղեցու շահերը : Յուսանք :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՅԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԻԻԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ՌԻՍԹՈՐԻ, 20 Մարտ

Ինչպէս ամենուրեք կը պատահի երբեմն , հոս ալ , այս երկրին մէջ ալ , մէկ քանի տարին մի անգամ դրամական մեծ տագնապ մը տեղի կ'ունենայ , որուն կը յաջորդեն սնանկութիւնը , դորձադուրք եւ անդործութիւնը : 1884-85 տարիները այս մասին նշանաւոր տեղ մը պիտի բռնեն պատմութեան մէջ , զի այս ամաց տագնապը թէ՛ երկար ժամանակ տեւեց եւ թէ՛ անկարագրելի թշուառութեանց պատճառ եղաւ : Մինչդեռ մէկ կողմանէ չափազանց արտադրութեանց պատճառաւ դորձարանները սեղմեցին իրենց աշխատութիւնները , արձակելով հանգրանքով դորձաւորներ , միւս կողմանէ ալ կարծես թշուառութեան փայլ մը տալու պատճառաւ , տարւոյն ձմրան եղանակն ալ վերջին աստիճան խիստ եղաւ : Երբ առատ դորձ կայ երկրին մէջ , արդարեւ ամեն անհատ կրնայ յուսալ աշխատիլ եւ ապրիլ ըստ բաւականին . բայց երբ դորձ չկայ , վարժ , դորձունեայ եւ ճարպիկ արհեստաւորը միայն կարող են դորձ գտնել : Գործարանատեարք իրենց ճարպիկ դորձաւորները ձեռքէ հանել չեն ուզեր , ինչ որ ալ լինի պատճառը , միայն թէ չսնանկանայ

դորձատէրը • սոյն պարագայի մէջ ալ կատարեալ արհեստաւոր մը միշտ կարող է ուրիշ դորձարանի մը մէջ ընդունելութիւն գտնել , դուցէ ալ աւելի օգտակար պայմաններով , որպէս զի մշտապէս դորձէ հոն : Բայց ընդհանուր դորձաւորաց համար չէ այս օրէնք • սովորական դորձաւոր մը , որ միայն իւր անվարժ բազուկներու միջոցաւ կարող է իւր օրական պարէնը ճարել , տագնապի ժամանակ կ'արտաքսուի դորձարաններէն • առանց յուսոյ եւ առթի կը տագնապի նա , զի ոչ ոք դորձ ունի իրեն համար : Գործարաններէ դորձ խնդրել , հաց մուրալու կը նմանի • կը նախատուի , կը յանդիմանուի եւ դարձեալ չես յաջողիր դորձ մը ձեռք բերել : Ասոր հակառակը , երբ դորձարանատեարք արհեստաւորաց կամ հասարակ դորձաւորաց պէտք ունին , ծանուցումներ կ'ընեն , նամակներ կը գրեն եւ կամ միջնորդներու կը դիմեն իրենց վարժ դորձաւորներ գտնելու համար : Սոյն երկու հակառակ պարագայից մէջ առաջինն ինքը կը ջանայ ու չի յաջողիր , մինչդեռ երկրորդը կը ջանայ եւ կը յաջողի՝ զգալի պէտք ունենալուն պատճառաւ :

Բայց ինչպէս որ ըսինք , դարձեալ պիտի կրկնենք թէ Ամերիկայի մէջ դորձ գտնելու , աշխատելու եւ ապրելու համար , արուեստի մը մասնաւոր ճիւղը գոնէ դորձելու կարող ըլլալու չափ զիտութիւն ունենալու է անձ մը , որպէս զի կարող ըլլայ միշտ դորձել եւ ապրիլ , հակառակ դրամական եւ այլ տագնապից : Այս ալ չբաւեր • հոս դալով աշխատիլ եւ ապրիլ մտաբերող անձ մը , ո՛վ որ ալ ըլլայ , անպատճառ երկրին լեզուն խօսիլ կարող ըլլալ է : Անգլիերէն չխօսող մէկը , անձնապաշտութիւն դորձած կ'ըլլայ եթէ յուսայ թէ Ամերիկայի մէջ աշխատելու ապրելու կարող պիտի ըլլայ ինքը • այս մասին հարկերներով ցաւալի օրինակներ կան բազմաթիւ մերայնոց մէջ : Ասոր հակառակ կրնանք բացարձակապէս ըսել թէ ոչ արհեստաւոր անգլիերէն խօսող մը միշտ հաւանականութիւն ունի անգործ չմնալու , մինչդեռ քիչ չափ արուեստի մը տեղեակ , սակայն երկրին լեզուն խօսելու կարող չեղող մէկը անկարելի է յաջողի աշխատիլ , որովհետեւ ոչ ոք իւր դորձը պիտի յանձնէ մէկու մը որ կարող չէ հասկնալ թէ ի՞նչ կամ

ի՛նչպէս գործելու է : Մէք անձամբ շատեր տարինք գործ մը խնդրելու համար գործարաններէ , որոց ունեք թէեւ յօժարութիւն ցոյց տուին ընդունելու , սակայն երբ խմացան անգլիերէն լեզուն հասկնալու կամ խօսելու անկարող ըլլալին , բացարձակապէս մերժեցին զանոնք . եւ իրաւունք ունէին այնպէս ընելու : Խուլ եւ համար անձինք իսկ իրենց յատուկ լեզու մ'ունին խօսելու , զոր երկրացիք բոլորն ալ կը հասկընան , մինչ դեռ մեր հայրենակիցք բառ մ'իսկ չեն գիտեր անգլիերէն : Ուրիշ կէտ մ'ալ կայ զոր հարկ է ի նկատ առնուլ եւ այն ալ սա է թէ մեք Հայքս , ըլլանք արհեստաւոր թէ ո՛չ , Ֆիզիկապէս անհամեմատ տկար ենք եւրոպացի արհեստաւորներէ : Ոչ մեր Ֆիզիկական կազմութիւնը , ոչ մեր սովորական սնունդը , ոչ մեր տեսած եւ սովորած մէթոտները կը յարմարին Խուլանոցի , Շուէտցի կամ Անգլիացի գործաւորաց : Լաւ ճաշ մ'ընելէ վերջը , երկու գաւաթ գարեջուր կուլ տալ , բացօթեայ կրթութիւններ ընել , կարգալ , վիճել եւ ի հարկին կռուիլ կամ գանակոծուիլ , ասոնք անհրաժեշտ պայմաններն են աւողջ եւ կորովի կազմութեան . հետեւապէս քսան առ հարիւր առաւելութիւն ունին եւրոպացի գործաւորք մերայնոց հետ բաղդատելով , զի այս վերջիններ չոր հաց եւ քիչ մը պանիր եւ կամ իրենց ապուրով կը սնանին . ըմպելիք չեն գործածեր , սլաւապոյ ժամանակին թուղթ խաղալով կ'անցունեն , ո՛չ կը կարդան եւ ո՛չ կը վիճեն : Ի՞նչ է հետեւութիւնը . ահա անգործութեան դատապարտեալ բաղմաթիւ անձինք , որք մուրալով իսկ կարող չեն հացի մը ստակ ձարել . պատճառ . որովհետեւ առանց արուեստի մը տեղեակ ըլլալու , առանց անգլիերէն լեզուն խօսիլ կարենալու եւ առանց չարաչար աշխատութեան վարժ ըլլալու , հարիւրին հարիւր սոկոս վճարելով զրամ կը ձարեն եւ Ամերիկայ կուգան . ի՞նչ ընելու համար . ոչինչ . այլ միայն թշուառ ըլլալու եւ ողորմելի ընելու իրենց ապաւինած կիւնն եւ զաւակները :

«Ամերիկա երթալով ի՞նչ պիտի ընէք» հարցման կը պատասխանեն եղբւր ունանք Քարբերդցիք թէ «եթէ բան մ'ալ չկարենանք ընել , գէթ աչքերնիս պիտի բացուի եւ աստուածներու պէս պիտի ըլլանք» : Եւ ի-

րօք Ուսթըր քաղաքի մէջ դանուող Քարբերդցիներէ մեծ մասը աստուածներու պէս եղան եւ աչքերնին բացուեցաւ երբ քսան երեսուն ոսկի պարտք ընելէ վերջը գրպանին առանց լումայի մը հոս հասան եւ իրենց հայրենակցաց դասն վիճակը տեսան : Այսօր եթէ մարդասիրութիւն , ազգասիրութիւն եւ օգնութիւն ընել վաւերաքի մէկը , չենք կարծեր թէ մեր Քարբերդցի հայրենակիցները հայրենիք վերադարձնելէ աւելի օգտակար բան մը կրնայ ընել . ա՛յնչափ սոսկալի է իրենց թշուառ վիճակը որ միայն մէկ քանի բացառութեամբ բոլորն ալ կը պաղատին հայրենեաց հողը մօտել՝ մեռնելէ առաջ , կորսուելէ առաջ : Մէք այս նամակաւ երկրին նիւթական վիճակը պիտի նկարագրէինք , եւ եթէ վայրկեան մը չեղեցանք մեր խնդիրէն , պատճառը սա է թէ ահա դարունը կը հասնի եւ ո՛ր դիտէ քանի՞ միամիտներ Հայաստանի խորերէն Ամերիկա գալ կը խորհին , մանաւանդ անոնք որ այս պահուիք երկրին եւ Գրիսպոնի ժողովրդեան վրայօք լսելու առիթ կ'ունենան իրենց երէցներէն : Ա՛հ , թող զգոյշ ըլլան եւ նիւթականապէս ահարկու տաղնապի մը ժամանակ չթողուն իրենց երկիրը , բռնակարանը , ընտանիքը եւ աշխատութիւնը : Ինչ որ ալ ըլլայ արդի վիճակնիդ , ո՛ր Քարբերդցի հայրենակիցք , Ուսթըրի Հայոցս նման անյոյս չէ ձեր վիճակը :

Աղքատը իւր դրացի հարուստէն պատառ մը կրնայ ակնկալել Քարբերդի մէջ . իսկ հոս ո՛չ եկեղեցիներու մէջ ի գործ դըրած նուաստութիւնք , ոչ արտասուք եւ ոչ որ եւ իցէ միջոց կարող չէ քու պարէնդ հայթայթել քեզ : 70 հազար ժողովուրդ պարունակող այս քաղաքիս մէջ 20 հազարէն աւելի անգործ աշխատաւորներ կան որոնք իրենց ճարտիկութեամբ եւ լեզուագիտութեամբ գործի սկսել յաջողելէ վերջը միայն աստ դանուող Հայոցս ալ գործ գտնել կարելի պիտի ըլլայ : Աշադքութիւն ըրէք եւ հաւատացէք թէ յօդուածագիրը ո՛չ ձեր հոս գալուն եւ ո՛չ հայրենեաց մէջ մնալու մասին չա՛հ մը չունի : Ինքը իբր պարզութեթեթակից իւր պարտաւրանութիւնը ընել կը կարծէ ծանուցանելով այն սխալ կարծիքը զոր ունին , մասնաւորապէս Քարբերդցիք ունանք , Ուսթըր քաղաքի մէջ գործ գտնելու մասին : Եթէ ձեր քաղաքացիներէ ունանք

անարժանք յաջողած են աստ՝ ադոնք բայառութիւններ են . մանաւանդ թէ աղգային հանդէսի մը մէջ մեղ չի յարմարիր մէջ տեղ հանել ադոնք դործ մը ձեռք բերելու համար ի դործ դրած միջոցները . սակայն սա չստիւ համարձակ կրնանք ըսել թէ կաշառք տալով, նուաստանալով եւ ուրիշի ապրուստով ձեռքէն խլելու համար կողմնակցութիւններ մուրալով ձեռք բերուած դործի հեղինակը՝ բոլոր դործարանին մէջ ծաղու աւարկայ եղած կը նախատուի եւ կը վրադարձուի առանց ամաչելոյ : Այդ աստիճան նուաստութեան համար վատ ծնած ըլլալու է մէկ մը . մեր Հայոցս մէջ ալ եթէ աղքատ շատ կայ՝ դէթ վատ Հայեր թուով շատ քիչ են . եղածներն ալ թէ՛ մեղ եւ թէ՛ տեղացւոց ծանօթ են :

Գանք հիմա վերջապէս երկրին նիւթական վիճակին : Նիւ - Եօրքի մէջ մասնաւորապէս առեւտրական տեղեկութիւններ պարունակող թերթ մը, որմէ պիտի քաղենք մեք մեր տեղեկութիւնները, կըսէ թէ՝ ո՞ր երկրի մէջ կը պատահի թէ երկու միլիօն դործաւոր անդործ մնան եւ ութը հազարէն աւելի դործարան դադրին դործելէ . օրականները մէկ տարուան մէջ 28 առ հարիւր կ'ընեն, երկրին մէկ տօլար արծողութեամբ հրապարակ հանած արծաթը հազիւ 78 հարիւրերորդ արծէք կ'ունենայ . կաշառակերութիւնը, շաշտութիւնը, քաղսքական ապականութիւնները եւ դողութիւններ կը քաջալերուին տեսակ մը անկարգութիւնը յառաջ կուգան, որոնց դէկը հին աշխարհի մեղ բռնութիւնն է . իսկ մեր մէջ տակաւին դործիք մը չունինք որուն միջոցաւ կարենանք ծանուցանել երկրին այլեւայլ կողմերը անդործնացող դործաւորաց թէ ուժանակի միջոցաւ դործ եւ օրական ձեռք բերելու խորհուրդը սխալ է, եւ անվայել : Ասի օր առաջ ըսելու եմք՝ պաշտպանելով մեր ստանձած՝ սղաշտօնը, այսինքն ընկերութեան ապահովութիւնը, եթէ ոչ ուժանակի սիրահարներու ընթացքը մահ կ'ընապառնայ մեր նիւթական եւ ընկերական վիճակին . թող թէ բոլոր աշխարհի առջեւ ամօթով պիտի մնամք եթէ չի կարենանք սատակապէս պատժել բոլոր այն յանդուգն տղաները որք կը համարձակին դրաւոր սպաւարտութիւններ ուղղել իրենց վաղեմի

դործատէրերուն, սպառնալով օդս հանել դործարանը եթէ անմիջապէս դործի չի ձեռնարկէ եւ նախկին օրականները չի վճարէ : Հո՞ս պիտի հասնէինք վերջապէս . ա՞յս է մեր պանծալի քաղաքակրթութեան արդիւնքը . ա՞յս է Ամերիկացւոյն կոչումը . ո՛չ եւ ո՛չ, ասոնցմէ ո՛չ մին կ'ընդունիմք մեք . այսու ամենայնիւ երկրին նիւթական վիճակը բարւոքել, դրամատեարց վստահութիւն ներշնչել, դործաւորաց վիճակի դառնութիւնը ամօքել մեր պարտականութիւններն են, եւ ասոնք հզօր ձեռք եւ զօրաւոր բազուկներով կարգադրել ձեռնարկելու մասին ժամանակ կորսնցնելու չենք, եթէ մեր պապերուն մեղ ժառանգութիւն թողած այս երկիրը իւր ամբողջութեամբ մեր զաւակներուն յանձնելու մտադիր ենք : Կարգալու կարող ո՞ր տղայ չի գիտեր թէ մէկ կողմանէ օրականները գեղջած ժամանակ, միւս կողմանէ ալ ապրուստի նիւթերու գիները կը բարձրանան այժմ : Բնութեան պարգեւած դրամագլխով (աշխատութիւն) օրական պարէնը անկալող դործաւորը ուրիշ ի՞նչ միջոց ունի իւր ցաւերը աշխարհի հոշակելու, դործադուլ ընելէ ի վատ : Գործադուլ ընել, դէնք մ'է հարստահարեալ արհեստաւորի ձեռացը մէջ, եւ շատ աղքու դէնք : Եթէ դործաւորները առաջնորդող գլուխներ չափաւորութիւնը սերտեն, հասարակաց կարծիքը եւ համակրութիւնը չահին, համբերող եւ զգաստ ըլլան, յայնժամ միայն երկրին նիւթական վիճակը պիտի բարւոքի . դործաւորներու սուղիչներու ձայնը պիտի խափանէ արդի ողբերու եւ աղաղակներու ձայները որոնք մինչեւ Արիւիկէի խորերը լսուեցան շնորհիւ ընդհանուր անհոգութեան եւ անտարբերութեան, որ հաւասար է կործանման եւ թշուառութեան :

Յիշոյց ուրիշ կէտ մ'ալ կայ որուն վրայ կը հրաւիրենք ընթերցողին ուշադրութիւնը, կ'ըսէ նոյն թերթը : Շատ քիչեր վերահասու եղած են այն պատճառներու թէ ինչպէ՞ս կը պատահի ո՞ր մինչդեռ մեծ եւ կեդրոն քաղաքներու շտեմարանները ինքն ամէն նիւթեղէններով, առատ սարէն կայ, անդործ մնացած դրամագլուխ եւ նոր ձեռնարկներ ընելու յօժարութիւն կայ, ինչպէ՞ս կը պատահի կըսենք թէ ամեն բան սուղ

եւ գործ չի կենար երկրին մէջ: Պատասխանը որոշ է: Մեր Նանքիները երբ կը խմեն, տակաւը պարպելու նպատակաւ կը խմեն. ուստի եւ երբ կը գործեն, գիշեր եւ ցորեկ կը գործեն: Նիւթ հազար գործաւորի պէտք ունէին, երկու հազար արհեստաւոր կը վարձեն, նոր գործիքներ կը հնարեն, դրամ կը վատնեն եւ ինչպէս ըսինք գիշեր եւ ցորեկ կ'աշխատին: Լաւ. բայց երբ երբ կը տեսնեն թէ իրենց արտադրած ապրանքներուն հրապարակ չի կայ, սեղանաւորներուն քով ամբարած դրամը օր աւուր կը նուազի, յայնժամ եւ անվճար «հրդեհ կայ» կը սրտան. կը գոցեն գործարանի դուռները, կը լեցնեն շտեմարանները ապրանքներով եւ կսկսին ողբալ եւ ըսել թէ ժամանակը դէշ է: Մենք ալ կ'ըսենք. այո՛, ժամանակը դէշ է եւ դուք էք նորա շարժառիթը: Մեր միլիոնատէրը չափաւորութիւն սովորելու են. նոյնը ընելու են եւ եւս մեր արհեստաւորը: Այս վերջինները դանդաղելու իրաւունք չունին երբ ի նկատ առնունք թէ անցեալ երկու տարիներու միջոցին գիշեր եւ ցորեկ աշխատելով, ուրիշ երկրի մը մէջ նմանը չը լուծած օրական ստացան. ո՛ր է այդ դրամը: Երկիրը՝ սոյն երկու տարուան միջոցին՝ երեք հազար միլիոնէն աւելի տօլար օրական վճարած է գործաւորաց, ի՞նչ եղաւ այդ ահագին գումարը: Պատասխանը յայտնի է. մեր արհեստաւորը ալ դրամատեսարց նման երբ կը շահին, ամեն բան ագէշ կ'երթայ. իսկ երբ անգործ մնան՝ ամենայն ինչ հակառակ է իրենց կարծեաց. գործատէրը բռնաւորներ են, երկիրը ապականեալ է եւ աղքատութիւնը տիրող ախտ մ'է Ամերիկայի համար: Արդարութիւն է այս: Ո՛ր է ձեր հանճարը եւ ո՛ր ձեր խոհեմութիւնը: Ի վերջոյ բանիւս կը կարծենք զիտնալ թէ ամեն ինչ որ մեզ ցաւ կը պատճառէ, ուսումնասիրելով զայն՝ պիտի գտնենք մեր ապագային օգտակար ըլլալու դաս մը, որմէ եթէ օգտինք, ուրիշ անգամ երբէք առիթ չի պիտի ունենանք այսչափ երկարօրէն դըրել այս ցաւալի նիւթին վրայ:

Մ. ԹՕՓՃԱՆԷԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՄԻՋԻՆՔԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍՆԵՐՆ

ՍԱԼԲԷԹԻԻԵՐԻ ՅԵՄԱՐԱՆՈՅԵՆ ՄԵՋ

Մեր ընթերցողաց մէկ մասն գիտէ անշուշտ թէ Ֆրանսացիք ո՛րպիսի չքով ու խրախճանօք կը տօնեն Մեծ պահոց Միջինքն: Գիտեն նաեւ թէ ամեն տարի այդ օր մեծ տօն կը կատարուի եւ պարահանդէս կը տրուի Սալբէթրիէրի կանանց յիմարանոցին մէջ, ուր յիմարներն եւ ապուշներն ալ կըրնան վայրիկ մը մօտնալ իրենց ամենօրեայ վշտերն ու չարջարանքներն, եւ մէկ քանի ժամեր ապրիլ երանութեան մէջ: Փարիզ կ'զբօնու այդ օրն, այլ ոչ ուրեք ուրախութիւն աւելի ցնծալից կը լինի քան ի Սալբէթրիէր, ուր Միջինքն լաւագոյն կերսով կը տօնուի: Այդ երեկոյին, սրահներն լուսազարդեալ են, եւ անդ մտնողը երբէք չկարծեր թէ կ'այցելէ դժոխքին չըջանալիներէն մին, յիմարութեան չըջանալին:

Պ. Ժիւլ Բլարսի, Թաֆլազայ մեծաւուն ըրոնիկագիրն, խօսելով մարտ 15ի գիշերը Սալբէթրիէրի մէջ կատարուած հանդէսներուն վրայ, գողտրիկ նկարագրութիւն մը կ'ընէ:

Աղջկանց Սրահին մէջ, ամեն ինչ հովուերգական տեսք մ'ունի. պատերն ըսպիտակ կտաւով ծածկուած են, մաքուր, պճնազարդ, ուսկից կախուած ծաղիկեղանջեր կը ծածանին թեթեւակի: Տեղ տեղ դրուած է ճրագ մը՝ յենարանի մը վրայ: Խորը, չքանդանն ուր մերթ ընդ մերթ փոքրիկ բերաններ կ'երթան մեծ կարկանդակներ կուտալ: Աղջիկներն, յիմարանոցին մէջ շինուած սիրուն զգեստներ հագած, կը պարեն, կը վալսեն, կը խնջան: Խեղճ արարածներ: Լուսնու հէ կամ ապուշ: Անոնց մէջ տեղ կը պտըտին վերսկացու կանայք:

Միակ նուագարանն է գաշնակ մը, որու վրայ կոյր երաժշտուհի մը կը սրտոտնէ իւր մատները: Եւ ապուշները կը սրտեն ու կը խնջան: Սալբէթրիէրի բոլոր պաշտօնեայք ոտքի վրայ են: Պահապանք կը հսկեն եւ աջաչուրջ կերպիւ կը հսկեն: Եւ մինչեւ յիմարանոցին ամբողջ շէնքն կը ննջէ մութին

մէջ, իւր երկար ու մուշկամոծ սրահներով յորս մէկէ աւելի անձինք կը տուտային ու գեղար, ասդին՝ պարասրահի երկու սրահներն — աղջկանց սրահն ու կանանց սրահն — կը շողան լուսափաղի եւ իրենց ճառագայթները կ'արձակեն պատուհաններէն դուրս :

Ապուշներու պարահանդէսն աւելի հանդարտ ու ծիծաղկոտ է քան յիմարներունը : Մանկութիւնը տակաւին կը պահէ անդ իւր ճորհները : Քաղցրահամբոյր, մեղմաբարոյ են այդ խեղճ փոքրիկ տկարամիտներն, եւ քեզ կը դիմեն ոչխարներու պէս, ըսելով .

— Բարի լոյս, պարոն :

— Աստու բարին, զաւակս :

Համբեր կան որոց խօսիլ ուսուցած է վերատեսչուհին, Օրիորդ Նիգօլ, եւ իրենց չրթներէն՝ որք գոց կը թուին, բառեր կը թռչտին, բաւական որոշ իրենց անուշ թոթովման մէջ .

— Բարի լոյս, պարոն անօրէն :

Հոն է վերատեսչուհին, Օրիորդ Նիգօլ, իւր սեւ գգեստներուն մէջ, հսկելով ամենուն վրայ : Արտաքին համբաւն, Ակադեմիոյ մերցանակն, Պ. Ժիւլ Սիմօնի տուած գովեստներն, ասոնց ամենուն ալ անտեղեակ կը թուի սուրբ աղջիկն : Իւր մաղբեր ճերմկած են . նոյն հանդարտութիւնն, նոյն ժպիտն ունի միշտ : Այլ շարունակէ իւր գործն, ապրելով իւր ապուշներուն մէջ տեղ, եւ անցնող մէն մի օր բան մը կ'աւելցնէ այդ սքանչելի կնոջ առաքինութեան վրայ :

Բայց դիտողին համար, յիմար կանանց պարահանդէսն է որ իրօք սոսկում կը ներշնչէ եւ տարօրինակ տեսարան մ'ունի :

Երբ Միջինքի երեկոյն Սալէթրիէրի գաւիթներէն անցնի մարդ, մեծ սրահն՝ ուր յիմար կանայք կը պարեն՝ զիշերուն մէջ կ'երևի լուսաղարջ, իւր փայլիլուն երկար պատուհաններով : Ներս մտնողն զարմացման տալաւորութիւն մը կը կրէ յանկարծ :

Աստ, բաղնաթիւնն աւելի խիտ է, բայց այդ մանկամարդ աղջկանց կամ կանանց ամբօխին մէջ, որոցմէ ոմանք սիրուն են, անհնար է կուահելթէ յիմարութիւնը, մենամուրթիւնը կամ լուսնոտութիւնը հպած է այդ ճակատներուն, պաշարած է այդ ուղեղները : Եւ սակայն այդ պառաւն որ կ'անցնի, լոնթիւմիցի սուրհանդակի զգեստ հագած,

երէկ բռնապղծատ հագած էր, փրփուր ի բերան : Այդ երկայնահասակ գեղանի աղջիկն որ իւր սպիտակ մաղբերուն վրայ եռագոյն խաւաւէնով աղբսեան գլխանոց մը կը կրէ, մենամուրթն որ դուցէ վաղիւ սոսկալի տանջանաց ենթարկուի : Ուղեղային աշխատութիւն մը, ինքն իւր վրայ դարձ մը պէտք է երեւակայելու համար թէ յիմարներու մէջ կը դառնուիս. կարելի՞ բան է այս :

Կ'անցնին, ժպտուն, երբեմն ծիծաղկոտ, շատ քիչ անգամ երազացնոր, անթարթ կամ մոլորեալ աչերով, եւ ինչ որ նշանակուած թեան արժանի է, սա է թէ երբեք չեն պոռար : Տեսակ մը լուրթիւն կը տիրապետէ : Տնօրէնը հոն է, եւ անոնք կ'զգան անոր իշխանութիւնն, որ սակայն միշտ համակրական եւ դիմասիրտ է : Պ. Լըկրան տիւ Սօլի բարձր հասակն եւ նուրբ ժպիտը կ'իշխեն անոնց վրայ : Այլ բարեւեն նաեւ, ժըստեղով, իրենց բժիշկներն, Տր. Լիւյ, Պ. Վլադիմիր :

Երկու նորատի աղջիկներ կ'անցնին վաղսելով, մին Սպանուհւոյ հագուստ մտած, նուրբ դիմադծերով, թուխ գեղեցիկ մաղբերով, անուշ եւ սեւ աչերով, բարեձեւ քթով . միւսն աւելի մեծ է, նրբահասակ, բանաստեղծական : Երկուքն ալ աւաղ, կատաղի մենամոլներ են :

Այդ միւս խարտեալ սիրուն աղջիկն, քաղցր դէմքով, որ պջրողաբար կը կրէ սկովտական հանդերձներ, բաւական վտանգաւոր լուսնոտ մ'է : Մեղմաղծիկ, դաժանաբարոյ, շատ անգամ դանակի հարուածներ կ'ուտայ : Քնքոյչ ու վէհերոտ աղջկան մը դէմքն ունի : Արածէս թէ կը խաբեն զքեզ, երբ այդ աճյնքան հանդարտ, աճյնքան սիրուն արարածոց մոլեգին հիւանդութեանց նկարագրութիւնը կը լսես :

Յիմարութիւնը ճանաչելի է միայն պատերուն երկայնքը նստած պառաւ կանանց քով, որք մանկամարդուհեաց վաղեղը կը դիտեն : Անոնցմէ մին, կախարդուհւոյ ըզգեստ հագած, պարահանդէսը կը դիտէ իւր մանր ու նուրբ աչերով, որք սոսկալի կերպիւ խորշումած երեսի մը մէջ թաղուած են :

— Յաջող կ'ընթանայ պարահանդէսն, կը հարցունեն անոր : Անցեալ տարուընէն աւելի գեղեցիկ է :

Պառաւն, որ ոտքի վրայ է, կը նստի, և կ'ախարդուհւոյ սրածայր գլխարկի մը խորէն, չորս ծալուած փոքրիկ թուղթեր պարունակող զլան մը կը հանէ եւ, իբր պատասխան, կ'ըսէ .

— Բաղդերնիդ փորձեցէք :

Եւ իւր դողդոջուն գրով հետեւեալը գրած է այն թուղթերուն վրայ, զորս կը քաշեմ ըստ բաղդի .

« Լաւ ամոսնոսութիւն մը պիտի հաղարէք էմ ամոսնոսութեան մը լաւը պիտի ամոսնոսեք » :

« Կեփահայր կամ կեփահայր պիտի լինիք » :

Կախարդուհւոյն քով, ուրիշ պառաւ կիին մը, սպիտակահեր եւ առնադէմ, մազերն իբր թէ փոխանդոյր, իւր իսկ հեղինակութիւնն եղող ոտանաւորներ կը բաշխէ եւ ամեն մարդու կը հարցնէ .

— Ձաւկէս լուր ունի՞ք : Եթէ տեսնէք զայն, ինծի զրկեցէք :

Թշուա՞ւ կիին :

Երրորդ պառաւ մը, աւելի ծեր, ժուռտ, իւր արտեւանունքէ զուրկ եւ կարմիրով շրջանակեալ աչերուն մէջ քաղցր նայութեամբով մը, հասութեամբուհւոյ մը հանդերձներ հագած, նստած է սեւադգեստ վերակացուհւոյ մը քով : Այդ կիներ միշտ կը ունայ, եւ միշտ քաղաքական ազազակ մը կ'արձակէ. « Կեցցէ՛ թագաւորն » կամ « Կեցցէ՛ Կայսրն » :

Սալբէթրիէրի մէջ Յեղատեալեանը կ'անուանեն զայն :

— Է՛յ, կը հարցնէ անոր տղթոր մը, այս գիշեր չէ՞ք պոռար :

Պառաւն ոտք կ'երնէ եւ իւր սեղմուած ակօսներուն մէջէն կը պոռայ .

— Կեցցէ՛ թագաւորն :

Յետոյ, մեղմիւ .

— Կարելի է որ ձերբակալեն զիս այսպէս պոռալուս համար... բայց խղճի մտօք չեմ կրնար պոռալ « Կեցցէ՛ Հանրապետութիւնն », որովհետեւ ես իսկ եմ Հանրապետութիւնը : Մարդ չպոռար « Կեցցէ՛ անձս » :

— Ա՛հ, ա՛հ, դո՞ւք էք Հանրապետութիւնն : Հանրապետութիւնը ձեզմէ՞ կը բաղկանայ :

— Այո... այո... այո... Եւ բան մ'ալ կայ որ շատ կը զարմացնէ զիս . — Երբէք տեսած չեմ իմ նախագահս... Երբէք... երբէք եկած չէ տեսնել զիս : Հանրապետու-

թիւն մ'որ չճանչեր իւր նախագահն, զարմանալի է այս, այնպէս չէ՞...

Այսպէս հանդիսականք կ'երթան կուղան, հարցաքննելով եւ ուսումնասիրելով յիմարներն ու հիւանդներն որք կ'ըսանունն : Յանկարծ կանայք ամենքն ալ դուրս կ'երնեն : Սթուներուն վրայ կը մնան միայն քանի մը պառաւ անդամալոյծներ կամ խելագարներ, բերանաբաց, մարած հայեացքով եւ այն վայրկեանին ուր նուազածուք, արուեստագէտներէ բաղկացեալ, օբէքէի քայլերդ մը կը նուագեն, խիղոյն մենամուշներն, լուսնոտներն, խելագարներն, իրենց դասակարգերուն բաժնուած, սրահէն ներս կը մտնեն վերապին եւ կ'անցնին Հանրային նպաստուց ընկերութեան տնօրէնին եւ Պ. լը Պաի առջեւէն :

Ոչինչ աւելի տարօրինակ քան այդ կատակերգական ողբերգական տողանցութիւնը :

Առջեւէն սիգութեամբ կը քալէ երկայնահասակ նիհար աղջիկ մը, հրամատարութեան գաւազան մը բարձրացուցած օդին մէջ, եւ անոր կը հետեւին յիմարներն, իրենց առջեւէն ունենալով վերակացու կանայքն եւ իրենց քովէն՝ սպասուհիները : Եւ երբէք, երբէք կարելի չէր ենթադրել թէ ակտաժէտներ են այդ զուլիցերացուհիները, սկովտուհիները, սէվիլցիները, այդ երգչուհիները, այդ նաւաստիները, երբէք, եթէ ներքին բժիշկ մը, մեր ետեւէն, չըսէր իւր ընկերով .

— Ա՛հ, աւասիկ իմ դասակարգս, առջեւէն գնացողը :

— Տղթոր Շարդոյի դասակարգն առաջ անցած է :

— Պ. Վուազէնի դասակարգն անոր կը հետեւի :

— Պրա՛վօ, տողանցութիւնն :

Եւ կը ծափահարեն : Եւ այդ պրա՛վօները յոյժ կը հպարտացնեն մենամուշներն, որք միշտ կը ջանան տաւաորութիւն գործել հանդիսականաց վրայ :

Երբ տողանցութիւնն աւարտած է, խելագարուհի մը սիրուն կերպով ծաղիկներ, մանուշակներ կ'ընծայէ տիկնանց, որովհետեւ Սալբէթրիէրի պարահանդէսն ալ ունի իւր հանդիսականները, բայց անշուշտ մէկէ աւելի տիկնայք նուէր մը տուած են

խեղճ աղջկանց՝ իրենց ծաղկեմանը փոխա-
րէն :

Ապա, այս ամեն աղմուկէն յետոյ —
կամ մանաւանդ այս գրեթէ աղմուկէ զուրկ
պարահանդէսէն յետոյ — ամեն ինչ կը մարի
այդ երկու սրահներուն մէջ, ուր կը պա-
րէին, աստ փոքրիկ ապուշներ, անդ թըշ-
ուտու խեղադարներ, եւ քունը կ'իջնէ այդ
ճակատներուն վրայ որք մոտածում մը չու-
նին : Երազը կը շարունակէ, թերեւս բա-
րեբաստիկ երազ մը, որ վայրիկ մը կը հե-
ռացնէ յիմարութեան խօլ տեսիլներն, ցը-
նորքներն, յարատեւ զառանցանքները կամ
մեղմանդձութիւնները :

* * *

Այս տողերու ընթերցումէն յետոյ, ան-
շուշտ ամեն Հայու մտաց առջեւ կը ներկա-
յանայ Եփեսոսի Ս. Գրգ. Հիւանդանոցն իւր
այժմեան աննախանձելի կացութեամբ : Չենք
ըսեր թէ Թրանսպառնոց նման՝ մեր ալ նման-
օրինակ զբօսանքներ ընձեռնէինք մեր յի-
մարաց՝ իւր մուացման ժամեր իրենց ա-
մենօրեայ թշուառ կենաց մէջ : Ո՛չ : Շատ է
այդչափ բան խնդրել մեր Ս. Գրգ. Հիւանդա-
նոցի վարչութեանէն, որ արդէն՝ պէտք է
խոստովանել՝ լաւ ըմբռնած է իւր ստանձ-
նած պարտականութիւնը : Երբեմն Սահ-
մանաբութեան տարեգարծի օրն հանդի-
սականք յայց կ'ենէին հիւանդանոցի յար-
կերն, եւ անդ յիմարներն ալ անմասն չէին
մնար այն ուրախութենէն՝ զոր Սահմանա-
բութիւնը կը ներշնչէր մեզ, եւ սիրտինք
կը գտնէին այցելուաց սիրալիր խօսակցու-
թենէն : Ինչո՞ւ դադրեցուցին այդ բարի
սովորութիւնը, որ արդիւնքներն այնքան
մեծ են բարոյական տեսակէտով : Ըսին
թէ Հիւանդանոցին խորթու լինիլն էր
պատճառ : Սակայն այդ խա՞ մէկը թող-
լով, կարելի չէ՞ ուրիշ միջոցներ խորհիլ որ-
պէսզի մեր խեղճ յիմարներն ալ, իրենց սե-
նեկին հեղձուկ միջնորդաբէն դուրս, կարե-
նան երբեմնակի միտարութիւններ ունե-
նալ :

ՀԱՍԿԱՔԱՂ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՅԹԻՔ

ԽՈՒԼԹԻԿ ԳԻԻԴ

Բ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Խուլթիկցի աղան երբ նշանէն, քիչ մը
չամիչ ու շիշ մը օղի կ'առնէն, աղջկան տու-
նը կ'երթան, կերուխում կ'ընեն հոն ու կը
ճկան : Հարսնանէն երբեմն ամենքը մէկտեղ
փեսատունը կ'երթան ու հոն ալ կերուխում
կ'ընեն : Հարսնտան մարդիկներն կը ճկուին
հոս : Քանի մ'օրէն վերջ հարսնանէն գալթայ
կը զրկեն փեսատունն : Պսակի օրն երկու
խնամիներն իրենց մարդիկները իրենց տու-
նը կը հրաւիրեն : Կիներն իրենց հրաւիրակ-
ներու ծոցն չամիչ, ընկոյզ, խնձոր կը լե-
ցընեն : մարդիկներն թաշկինակ կը տանին
կը զարնեն փեսայի մէջքն : Երկու կողմի տը-
ներն քիչ մը կերուխում ընէին վերջ փողով
ու թմբուկով փեսայի մարդիկներն հարսի
տունը կ'երթան ու խա՞ն ու ճկ կուտան :
այս սակարկէն վերջ եօթը լօշ կը բերեն
մէջտեղն եւ հարսի ու փեսայի քաղորներն կը
կիսեն զանոնք : ասոր «հաց կիսիլ» կ'ըսեն :
հարսի քաղորն աղջկան անեցիներու վրայ
կը բաժնէ իր բաժին կէս հացը, փեսայի
քաղորն տղու տունը կը զրկէ զայն : Երբ
այրերն այս ծիսի մէջն են, աղջկան
տան կիներն փեսատան կիներուն գալթայ
ու չամիչ կը ցրուեն : «խաւ ու գալթան»
փեսայի ընկերներէն մէկը կ'առնէ, փողն
ու թմբուկն կը հնչեն, եւ այս ժխորի մէջ
երկու խնամիներու կողմերն կ'աշխատին
խաբով մը իրարու կողմէն մէկը համբուրել-
«խնամապագ» կ'ըսեն Խուլթիկցիներն այս
խաղին : Խաղն այն կողմը կը շահի, որի
մարդն միւս կողմէն մէկը կը համբուրէ :
Հարսի գօտին, կօշիկներն, բաճկոնն, քոշքն
կեսրանք կը բերեն : Երբ հարսն հագցնեն,
եօթն անգամ մէջկապն կը կապէ ու կը քակէ
կեսրայրն, հարսն ալ եօթն անգամ կեսրայրի
ոտքը կը համբուրէ : կեսրայրն ստակ կու-
տայ հիմա հարսին, Քաղոր Ալան ալ հարսի
վարպետահիին : Չամիչի, ընկուզի շաքը մը
կը հիւսեն հիմա հարսի ծամերու հետ ու

փողն ու թմբուկն կը հնչեն . հարսի հայրն քանի մը զրուշ կուտայ փողարին ու հարսը եկեղեցին կը տանին . հարսին կ'ընկերանան հարսնեղբայրն ու հարսնեղբայրն : Փեսայն իր ընկերներու հետ արդէն եկեղեցին է հիմա : Հարսն ու փեսայն ո՛ր ճանքէն որ եկեղեցի երթան , պէտք է ըսել , թէ այն ճանքէն չ'են դառնար . Բէկոսի ճանքն Բիւի կ'ընէ , կըսեն : Երբ եկեղեցիի քովը երթան , «խաւ ու դաթան» առնող փեսեղբայրն հաւը կը մատչէ : Պատկի ատեն հարսի ու փեսայի շորերու կապերն կը թուլցնեն , որ «կապ չբանի» իրենց վրայ . երբ պսակէն ելնեն , փեսայի մէջքի թաշկինակներէն՝ որին «խաշկոճ» կ'ըսեն՝ մէկը կ'առնէ Տէրտէրն , ու շուրջաւ մը կը ձգէ վրան , գիրկն ալ մաշտոց մը կը դնէ : Շուրջաւի քղանցք բռնողն փեսայի կողմէն է . բայց պէտք է որբ չ'ըլլայ , որ հարսի ու փեսայի ծնողքն չմեռնին : Երբ փեսատան դուռը կը հասնին , մէծխտ մը տան մտնողչէք կուտան հարսին , եօթն լօշ կը ձրգեն գլխու վրայ ու տուն կը մտնեն . հարսի կեսուրն ալիւր ու չամիչ ձեռք առած կը դիմաւորէ հարսն , ան ալ մատը ալիւրի մէջ կը խոթէ ու կը խաջանչէ գրանդին : Յետոյ երգեցիկներն ու Տէրտէրներն կ'երգեն ու եօթն անգամ թոնրի վրայ կը պտտցնեն հարսըն ու փեսան , ու ամեն մի պտոյտին հարսի գլխի լօշերէն լօշ մը ու կուց մը չամիչ կը ձգեն ժողովուրդի մէջ . շուրջաւն ու մաշտոցն կ'առնէ յայնժամ Տէրտէրն փեսայէն ու հարսն կը տանին լաւ տեղ մը կը նստեցընեն . հարսնեղբայր , հարսնեղբայր , քովորն փեսատուն կը մնան , մինչեւ որ հարսնիքը վերջանայ : Եթէ ցորեկ է , այն ատեն տանիքը կ'ենեն կը պարեն . խաղի մէջ այն մարդը կը գովուի , որ սլարի աջակողմի գլուխը կեցեր է . այս դիրքը ձեռք բերելու համար շատ ատեն ծանր կռիւներ կ'ըլլան : Պարախաղի մէջ մէկը կայ , որ «չաբաշ կընէ» . ուղղը տաս փարա կուտայ ասոր , ան ալ ստակը դիտեալ անձի գլխի վրայ դնելով «չաբաշ , մալիավա՛ . սաղ ոսկի մի վահան մի քո գլխուն չաբաշ երաց» կը գոչէ : Շաբաշի փարան փողարին ու թմբակահարին է : Պարը մինչեւ երեկոյ կը տեւէ . երեկոյին փեսատան մէջ , որին «խաղտուն» կըսեն , կը խաղան , կը պարեն :

Երկրորդ օրն փողով ու թմբկով հարս-

նաւորներն փեսատունը կը ժողովին , ու քիչ մը վերջ նախշուն սեղաններ կուգան հարսնիքի տունն . այս սեղաններու վրայ գաթայ կը շարեն , գաթաներու մէջ վառուն մոմ ու խնձոր , ու կը բերեն այն հարսնաւորի առջեւ կը դնեն , որի տնէն կուգայ սեղանը . «ծաղր» կըսեն ասոր տեղացիք : Փեսատնէն մէկը կը կայնի դրան քով ու եկած ծաղրերէն մի մի գաթայ կ'առնէ , «խաւ ու դաթայի» քով կը դնէ : Հարսի հայրն ալ կուգայ այսօր փեսատունն ու ետիւ տեսնողչէք կուտայ փեսային . բաւական կերուխումէ վերջ կ'ենեն աղբիւր կը տանին փեսան , որ «ջրեն» : Փեսան աման մը կը բռնէ ձեռին , եօթն անգամ կը լեցնէ , կը պարպէ աղբիւրի մէջ , յետոյ ջրով կը լեցնէ ամանն ու կը տանի պարելու տեղն կը սրկսէ պարուներու վրայ . երեկոյին խաղտուն է : Այս գիշեր հարսէն ու փեսայէն բան կը գողնան . երբ հարսնեղբայրն փրկանք տայ , այն ատեն հարսի գողօնքը կուտան . փեսայի գողօնքի համար քովորն փրկանք կուտայ : Հարսնեղբայրն երկու քառորդ «մատնիկ» կուտայ այսօր փեսային , փեսան ալ հարսին կուտայ զայն , որ մատանի . մը չ'ինէ իրեն : Երրորդ օրն «խաւ ու դաթան» կուտեն ու կը շարունակեն իրենց խաղն ու խաղտունն : Երրորդ օրն հարսնեղբայր ու հարսնեղբայրն պարդեւներ կ'առնեն , կը մեկնին ու հարսնիքը կը վերջանայ : Հարսնիքի առջի օրեր հերանց տնէն հաց կը բերեն հարսին , վերջնիք օրն կեսրանց հացը կ'առնէ ու հաց-ուտողչէք կ'առնէ . հիմա կը ծածկէ հարսն իր գլուխն . կոյս աղջիկներն չ'են ծածկեր : Ութ օրէն վերջ հերանց տընէն ուտելիք կը տանին փեսատունն ու հարսը հերանց տուն կը բերեն . կեսուրն մէծխտ մը կուտայ հարսի հրաւիրակին , ան ալ զգեստ կը շինէ փեսային : Երբ հօր տուն գառնայ հարսն , տան-մտնողչէք կ'առնէ ու տուն կը մտնէ . առջի եօթնեկէն վերջ հարսը կը սկսի փոփոխաբար երեք օր հօր տուն , երեք օր կեսրանց տունն անցնել . եթէ պանդուխտ է հարսը , տօն օրեր կը տարուբերեն : Առջինեկ ծննդ արբերութիւնն վերջ կուտայ այս երթեւեկին :

Յ. ՏՈՒՏՈՒԽԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ե Ր Գ

Մ Շ Ո Յ Բ Ա Ր Բ Ա Ռ Ո Վ

Ես Արշակն եմ կոչվելը 1,
 Հինգ օր դացի կօյեր 1 մանցի 2.
 Դօրօրա՝ 3 Սայամ՝ 4 շօրօրա՝.
 Տարտերս շատ ին 5 զիս կ'օրօրայ՝
 կօյի բոլոր մանտըր ուռեր 6,
 Արշակի մեր 7 ճիկըր 8 ծուռ էր.
 Վերեւս իշենը 9 բարձրիկ սարեր,
 Ներքեւս իշենը մարմար քարեր,
 Արշակն իր մեր մէկ ու ճար էր 10.
 Դօրօրա, Սայամ, շօրօրա.
 Լալթեր Արշակն կ'օրօրայ՝
 քամին եկաւ երան երան 11,
 Գնաց հասաւ Մըշու բերան.
 Մըշու հաւքեր 12 թեւաւորան 13.
 Արշակնց տուն սեւաւորան 14.
 Դօրօրա, Սայամ, շօրօրա.
 Լալթեր Արշակն կ'օրօրայ.
 Ես Արշակն ենք 15 պալայ կապով 16,
 Չենք խեղդուէ տէկմէ՝ հալով.
 Ես խեղդուայ մէկ ձուկ ապով 17.
 Դօրօրա, Սայամ, շօրօրա,
 Լալթեր Արշակն կ'օրօրայ:
 կօյի բոլոր 18 ատա մատա,
 Գացէք կանչէք զ'երէց թող գայ,
 Հօր մը բանայ, զ'Արշակ հանայ.
 Դօրօրա Լըն.
 Ես Արշակն ենք բեռ մը բարով.
 Գուռ ու դրկէց մանցէք բարով.
 Եւ Հ'բք տեանայ հազար տարով.
 Դօրօրա կիւրիւմ Լըն.
 կօյի բոլոր մանտր աւազ.
 Արշակի հօր խելէն էր պակաս.
 Դօրօրա՝, Սայամ, շօրօրա՝.
 Տարտերս շատ էր զիս կ'օրօրայ:

Հասաւեց

Մ. ՍԱՐԳԵԱՆ

- 1 կէօյեր, լճակներ.
- 2 Կնացի.
- 3 Երեւոյ, շարժէ սրգապանծ.
- 4 Արշակն նշանածին անունը.
- 5 Են.
- 6 Ուռերներ.
- 7 Մօր.
- 8 (ձկն)եր, սիրտ.
- 9 Աշենք, աշքենք, նայինք.
- 10 Նեցուկ, ապուէն, Արշակը իւր մօր մէկ հա-
տիկ դաւակն ու միակ նեցուկն էր.
- 11 Երամ երամ, խումը խումը.
- 12 Թաշուներ.
- 13 Թեւ առին, թռան.
- 14 Սեւ առին, սուգը մտան. «Սեւաւորան» բայը
Մըշոյ մէջ գործածական է:
- 15 Եմ Տարտերս մէջ եղ. Ա. դէժի տեղ գրեթէ
միշտ յորժանակի Ա. դէժի կ'գործածուի.
- 16 Գոյնգոյն թիւերէ շինուած կապ.
- 17 Պատճառաւ.
- 18 Դուրջը, բոլորախըր:

ԶԱՆԱԶԱՆԻՔ

Զ Ե Ռ Ք Ն Ե Ի Զ Ա Յ Ն Ն

Մեր ընթերցողները գիտեն թէ վերջին
 ժամանակներս գիտունը այլ եւ այլ փոր-
 ձեր կ'ընեն՝ մարդու մը գանկին, ձեռաց,
 եղունգներուն, ձայնին եւ ձեւերէն կամ
 տարբերութիւններէն կարենալ գուշակելու
 համար այդ մարդուն նկարագիրն եւ բը-
 նաւորութիւնը:

Այդ աշխատութիւններէ քաղելով՝ բա-
 նի մը տեղեկութիւններ կը հաղորդենք աստ՝
 ձեռաց եւ ձայնի մասին.

Ձեռաց ձեւը նշան մ'է՝ որ շատ քիչ ան-
 դամ կը խաբէ դիտողը: Կանանց քով, յոյժ
 նիհար ձիւքն ցոյց կուտայ երաժշտասէր
 կինն, գրագիտուհին կամ՝ վաճառատանց
 օրիորդներն: Սպիտակ եւ կապոյտ երակ-
 ներով գծեալ փափուկ ձեռքն ցոյց կուտայ
 խիղցն աղնուական, պարագայրդ կինը: Դիտ-
 ուած նաեւ թէ առանց օթքի (') աղջկանց մա-
 տերն երկար ու մստոտ են, եւ թէ ընդհան-
 րապէս վատահամբաւ աղջկունք սիրուն
 ձեռքեր ունին, բայց քիչ մը լայն:

Գալով արանց ձեռքերուն՝ անոնք աւե-
 լի դիւրին են ի գուշակութիւն: Փափկա-
 ճաշակ մարդիկն, գրագէտն, արուեստագէ-
 տը՝ նուրբ եւ ջղային ձեռքեր ունին: Գոր-
 ծի մարդոց, սեղանաւորաց, միջնորդաց
 ձեռները մստոտ են, մատները մազոտ ու
 երբեմն կարմիր եւ եղունգները տափակ:
 Շատ կարճ բթամատը նշան է երկչոտ եւ
 զգոյշ բնաւորութեան մը: Եստաւէր ան-
 ձանց ձեռքն միշտ մազոտ ու կարճ է: Բը-
 ժիլներն ընդհանրապէս ունին լայն, դո-
 գաւոր ափ եւ կարճ եղունգներ:

Նոյն ուսումնասիրութիւնը եղած մարդ-
 կային ձայնի վրայ եւ աւատիկ յառաջ ե-
 կած արդիւնքն.

Սուր ձայնը նշան է մեծաբանութեան,
 պարծենկոտութեան, ճապուկ ձայնը՝ նըր-
 բամտութեան, դաժանաբարոյութեան,
 թրթռուն ձայնը՝ պերճախօսութեան, գրա-
 գիտութեան սիրոյ, սուլող ձայնը՝ ծաղու,
 խծրճանաց, ունդային ձայնը՝ տղիտութեան,
 ապուշութեան, քաղցրալուր ձայնը՝ հան-

ճարեղութեան, խռպոտ ձայնը՝ հպարտութեան, տիրապետութեան սիրոյ, խուլ ձայնը՝ չարախօսութեան, չարկաղկութեան, կաղկանձող ձայնը՝ դողութեան խաբեբայութեան, երկարածիւղ ձայնը՝ վաւաչողութեան, հրապուրանաց, կոկորդային ձայնը՝ անհատատամտութեան, ճակատադրականութեան, չոր ձայնը՝ չարութեան, ագահութեան, վշտաղին ձայնը՝ զգայասիրութեան, խոկմանց, մետաղական ձայնը՝ որոշողութեան, յամառութեան, երաժշտական ձայնը՝ շողորմութեան, ստախօսութեան :

Ք Ա Ղ Ո Ի Ս Ծ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐԱՅ

25-29 ՄԱՐՏ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ֆրանսական նախարարութիւնը վերջապէս կրցաւ կազմուիլ ընդ նախագահութեամբ Պ. Պրիստինի : Հանրապետութեան նախագահն ի սկզբան Պ. Ֆրէսինէի եւ ապա Պ. Քոնսթանի յանձնեց նոր նախարարութիւնը կազմելու գործը, սակայն ասոնք չը յաջողեցին, Պ. Պրիստին յանձն առաւ նախարարապետի պաշտօնը :

Պ. Պրիստին երեսփոխանաց ժողովոյ նախագահն էր եւ կը համարուի Ֆրանսայի ամենէն ազդեցիկ եւ կարող քաղաքագիտաց մին : Կը կարծուէր ընդհանրապէս թէ Հանրապետութեան Նախագահն պիտի ընտրուէր Պ. Ժ. Կրէվիլ տեղ, որոյ եօթնամեայ պաշտօնավարութեան պայմանաժամը լրանալու մօտ է :

Պ. Պրիստին՝ Կամպէթթայի յաջորդն եղած էր իբրեւ նախագահ երեսփոխանութեան : Ինքզինք վերապահել կը թուէր դժուարագոյն վայրկեանին, եւ յայնժամ եւ եթ կը հաճի ընդունիլ նախարարապետի պաշտօնն, երբ ուրիշ կարելի նախարարապետներու անցաջողութիւնը կը հաստատուի : Պ. Պրիստին կազմած է զօրաւոր նախարարութիւն մը յորում արտաքին գործոց նախարար է Պ. Ֆրէսինէ, եւ ներքին ու պատերազմական գործոց նախարարը եւ Կամպէթթայի նախկին պաշտօնակիցը :

Երեսփ. ժողովոյ դեր-նախագահ Պ. Ֆրէսինէ նախագահ ընտրուեցաւ Պ. Պրիստին տեղ :
— Բէքինէն կը հեռագրեն առ Թայիլ թէ Ֆրանսայի եւ Չինաստանի միջեւ հաշտութիւն կնքուելու վրայ է :

— Վերթորիա թագուհին անցեալ երեքշաբթի օր Ֆրանսա հասաւ : Հինգ անգլիական մարտանաւեր տարին զնա ի Շէրպուր, ուր իջաւ Թագուհին իւր Պէտղրիս աղջկան հետ—ոչ սլաշտօնապէս—եւ կառավարմբ մը մտնելով, դնաց Էքս-լէ-Պէն, յօգափոխութիւն, ուստից Գերմանիա պիտի անցնի :

— Պ. Ժ. Ֆէրրի ընտանեօք Իտալիա գնաց, զերծ մնալու համար թշնամական ցոյցերէն զորս Խորհրդարանի անդամոց ու լրագրութիւն մի մասն յօժարակամ կը շարունակէ անկեալ նախարարի մը դէմ, օգուտ քաղելով Ֆրանսայի մէկ փոքր գժբաղդութենէն : Լուրջ թերթեր կը պարսաւեն այս ցոյցեր :

— Վերջին Ռուս թերթերէ կը տեղեկանանք թէ Դոստոյ կոմսին Խրիմեթթալէն ի վեր, հիւանդութիւնը (թոքախտ) առաւել եւս սաստկացած է : Ռուս թերթեր ոչ եւս կ'անուանեն զնա նախարար, այլ միայն «Կրաֆ (կոմս) Դոստոյ» :

— Ռուս թերթեր կը ծանուցանեն թէ Կաւկասիոյ մէջ մեծ պատրաստութիւնք կը կատարեն՝ ի նախատեսութիւն պատերազմին ընդդէմ անգլիացւոց : Պազուկ եւ Բեդրովքի ճանքով շարունակ զօրք կը զրկուի ի Բրասնավոտսօք, Կասպից ծովէն անդին : Կաւկասիոյ մէջ ընդհանուր կարծիք կայ թէ պատերազմն անխուսափելի է :

— Կալիպթայէն կը հեռագրեն թէ Լորտ Տըֆրինի եւ Ապտիւրրահման խանի միջեւ խորհրդակցութիւնը կը շարունակեն գոհացուցիչ կերպիւ : Հնդկաստանի ոչ միայն անգլիական, այլ եւ տեղական լրագիրք իրենց գոհունակութիւնը կը յայտնեն այն համաձայնութեան մասին որ Հնդկաստանի եւ Աֆղանստանի միջեւ հաստատուելու վրայ է :

— Ռուսական քանի մը լրագիրք կը ծանուցանեն թէ Կուրքօ զօրավարը Թուրքաստանի ընդհանուր կառավարիչ պիտի անուանի եւ թէ անոր պիտի յաջորդէ Բէգրի Շուվաթ :

— Գերմանիոյ Կայսրը, Պիլզմարք իշխանին ծննդեան 70րորդ տարեդարձին առ-

թիւ, ինքնադիր նամակ մ'ուղղեց անոր, իւր սիրոյ եւ երախտադիտութեան ջերմ ըզգացումներն յայտնելով եւ իւր յիշատակ ընծայելով նկար մ'որ կը ներկայացնէ Գերմանիոյ կայսրութեան հրատարակումն ի Վէրսայլ 1870 ին :

Ն Ե Ր Ք Ի Ն

Շուէտ-Նորվեգիոյ թագաւորն ու թագուհին հինգշաբթի, կէս օրին, մայրաքաղաքս եկան իւզէֆֆին շոգեհաւով եւ Տոլմա Պահլէի պալատն ելան, ուր Վեհ. Սուլթանը գնացած էր յատկապէս, իւր օգոստոս փառ հիւրերն ընդունելու համար : Թագուհին անմիջապէս շուէտական դեսպանատունը գնաց, իւր հիւանդ որդւոյն Շարլ իշխանին քով, իսկ թագաւորը Վեհ. Սուլթանին հետ տեսակցելէ յետոյ, մեկնեցաւ, Մեծ-Եփրատին ընկերակցութեամբ եւ դեսպանատուն գնաց : Նախարարք եւ պալատական սպայք դեսպանատուն գնացին բարի գալուստ մաղթելու : Նոյն գիշերը թագաւորն ու թագուհին դեսպանատունը մնացին իրենց որդւոց քով : Ուրբաթ առաւօտ թագաւորն այցելեց Պոլսոյ քանի մը պատմական վայրերն եւ ապա ներկայ գտնուեցաւ Սէլամըզի արարողութեան : Ամենուրեք արքայաւայել եւ փառաւոր ընդունելութիւնք կը լինին Նոցին Վեհափառութեան :

Ոսկար թագաւորն Եւրոպիոյ մէջ մեծ համբաւ ունի իւր գրագէտ եւ բանաստեղծ, եւ մեծապէս նպաստած է իւր երկրին մէջ գեղարուեստից եւ մատենագրութեան զարգացման :

— Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը գնահատելով իւր Անճնական Գանձուն Նախարար Վսեմ. Բաղադեան Յակոբ փաշայի ծառայութիւնները, բարեհաճեցաւ Ս. Զատիկի կիւրակէ օրն առաջին կարգի Օսմանիէ տիանափուռ պատուանշանն ընծայել Ն. Վսեմութեան :

— Նիւ-Հաւլընէն (Միացեալ Նահանգ) կը հեռագրուի թէ օսմանեան կառավարութեան գործակալք մեծ քանակութեամբ գէնք եւ ռազմավորք յանձնարարած են Վինչէսթըրի գործարանին :

— Մայրաքաղաքիս Փրանսական դեսպանատան գործակատար Պարոն Ուիզլի թէպէտեւ սպաքինած է իւր վերջին հիւանդութենէն, սակայն տակաւին դարմանի եւ հանգստեան կարօտ լինելով, իւր իսկ խընդրանօք՝ առաջին քարտուղար Պ. Էմպէր գործակատար անուանեցաւ :

— Կրթական նախարար Մուլթաֆա փաշա շարժեց մի վեր հիւանդ :

— Կը յիշուի թէ Բ. Դրան եւ Ռուսական դեսպանատան միջեւ եղած կարգադրութեան մը համաձայն, առաջինն յանձն առած էր 30,000 ական ոսկւոյ մասնակի վճարումներով հատուցանել Ռուսական վերջին պատերազմէն Ռուս հպատակաց կրած վնասներն : Ըստ այսմ, ներկայ ապրիլ 1 ին 30,000 ոսկւոյ երկրորդ վճարում մը տեղի ունեցաւ Օսմ. Կայսերական Պանքային ձեռամբ :

— Յունական եւ անգլիական թերթեր կը հաստատեն Լանտրայի Սքարամանկա մեծ վաճառատան սնանկութիւնը, 350,000 ոսկւոյ բացով մը, Բեդրսպուրկէն կը հեռագրեն առ թայի թէ այս սնանկութիւն մեծ յուզում պատճառեր է Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ, եւ կը վախճուի որ իւր հակահարուածներն ունենայ ի Մոսկուա որոյ գլխաւոր վաճառատունք յարաբերութեան մէջ էին Սքարամանկա վաճառատան հետ : «Երկու ամսուան մէջ, կը յարէ հեռագիրը, Մոսկուայի ամենամեծ վաճառատանց հինգն որք արմտեաց եւ շաքարի առեւտրով կ'ըբաղէին, իրենց վճարքը դադրեցուցին 16 միլիոն ըսկալի պարտքով : Մոսկուա առեւտրական կառարեալ տաքնապի մէջ է եւ Ռուսիոյ ելմտական նախարարն անդ զրկեց պետական Պանքայի տնօրէնը, տեղւոյն սեղանաւորաց հետ խորհրդակցելու եւ անմիջական վտանգի մ'առաջն առնլու համար» :

— Զատիկական տօնին առթիւ, Յունաց Պատրիարքական փոխանորդը Քաբու Բէհասիի ընկերակցութեամբ այ-

ցելութիւն տուաւ պապական նուիրակ Յ. Բոթէլլին, ինչպէս նաեւ հայ հռոմէականաց Պատրիարք Դեր. Աղարեան, Սրբազանին, և ի դիմաց Յովակիմ Պատրիարքին շնորհաւորութիւններ ժառոյց :

— Յայտնի է թէ Եւրոպայէն՝ Թուրքիոյ ճանբով Պարսկաստան զրկուած ապրանաց մէն մի հակի վրայ 20 փարայի տուրք մը կառնուի, այն առաջին ինն ամսոց համար յորում օսմանեան մաքսատան մէջ ի պահ կը դրուին: Այս տուրքը կը կրկնապատկուի յաջորդ 15 ամսոց մէջ, մինչեւ որ երկու տարին լրանայ: Կ. Պոլսոյ Մաքսատան վերատեսչութիւնն այս անգամ պաշտօնական ազդով մը կը ծանուցանէ վաճառականաց թէ այս վերջին պայմանաժամի լրմանէն յետոյ մաքսատունէն չհանուած ապրանքներն անմիջապէս ի վաճառ պիտի հանուին և արդիւնքը պիտի յանձնուի մաքսատան անտուկին, ինչպէս կը լինի արդէն այն ապրանաց համար որոց տէրն երեւան չենէր, օրինական պայմանաժամին լրմանէն յետոյ:

— Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ վեհ. Սուլթանին հրամանաւ բանակաց մէջ դասախօսութիւնք պիտի լինին այսուհետեւ, անուա զօրականաց նախնական կրթութիւն աւանդելու համար: Ուսուցանելի առարկայք են՝ ընթերցանութիւն, գիր, պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն և այլ նախնական գիտելիք: Ուսմանց ծրագիրն և հարկ եղած կանոնագիրը տպուած պատրաստ լինելով, բաշխուած է մայրաքաղաքիս զինուորական իշխանութեանց, ընդ փոյթ գործադրութեան դրուելու համար:

Ա. Զ. Դ. Ա. Յ. Ի. Ն

Ազդ. Ժողովոյ Ատենապետ վսեմ. Տիգրան Էֆէնտի Եռասուֆեան՝ Զատկի առաջին օրն հետեւեալ հեռագիրն ուղղեց առ Ամեն. Յարութիւն Ս. Պատրիարք Հայրն:

«Առ Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան վեհապետեան, Պատրիարք Հայոց Թուրքիոյ, «Զատկական մաղթանաց հետ, Ս. Տեառնըդ տօնախմբութիւնն եւս կը շնորհաւորեմ, երկար կեանք մաղթելով յանուն Ազդային Ժողովոյ:

24 մարտ 85 (Ս.Պ.) ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Կ. ՊՈԼԻՍ

Ն. Ատենապատուութիւնն հետեւեալը պատասխանեց հեռագրաւ:

«Տիգրան Էֆէնտի Եռասուֆեան, ի Պատրիարքարան Հայոց,

«Շնորհակալութեամբ ընդունեցանք Ձեր շնորհաւորութեան մաղթանքներն յանուն Ազդային Ժողովոյ:

«Փոխադարձաբար Ձեզ և Ազգին երջանիկ կեանք բարեմաղթեմք:

Երուսաղէմ (Ս.Պ.) ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

25 մարտ 85

— Կը յիշուի թէ Ատենապետաց Դիւանն որոշած էր՝ յառաջիկայ կաթողիկոսական ընտրութեան ժամանակ Թուրքիոյ Հայոց մասնակցութեան իրաւունքը ներկայացնելու պաշտօնն յանձնել կաթողիկոսական Տեղապահ Ամեն. Մակար Սրբազանին, եւ այս մասին Ընտրողական Ժողովին ուղղելի յայտագիրն ազգային պաշտօնատարի մը միջոցաւ ուղարկել: Ատենապետաց Դիւանն անցեալ ուրբաթ օր ի նիստ դումարուելով, Էջմիածնայ Ընտրողական Ժողովին ուղղելի յայտագրին «պաշտօնատարութիւն» յանձնեց Արժ. Տ. Մկրեան՝ աւագ քահանային:

Տ. Մկրեան հայրն այսօր կամ երկուշաբթի կը մեկնի մայրաքաղաքէս ի Ս. Էջմիածին:

— Կը լսենք թէ Արժ. Մկրեան Հայրը կրօնական ժողովոյ կողմէ եւս պաշտօն ընտացած է Ս. Միւսոն բերել Էջմիածինէն:

— Դավրէժէ փետրուար 12 թուով կը գրեն Տիգրիսի լրագրոյ մը թէ Պ. Օրբէլեանց անուն Հայագգի մը ձերբակալուեր է իբրեւ թղթակից «Արեւելք» ի եւ հեղինակ առաջին թղթակցութեան Գարատաղի խժդժու-

թեանց մասին : Ծանր վտանգ կ'սպառնայ եղեր Պ. Օրբէլեանցի : Բարեբաղդապէս սա կը յաջողի համոզել պարսիկ դատաւորները թէ յարաբերութիւն չունի Արեւելքի հետ , ինչպէս եւ չունի իրօք :

— Կրօնական ժողովոյ ատենապետ Գեր . Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ , Օրթագիւղի քարոզիչ Արթ . Յակոբ վարդապետ Աշոտ Փափագեան , Ազգային ժողովոյ Գ . ատենապետ Թորոսեան Յովհաննէս էֆէնտի , եւ Քաղաքական ժողովոյ Բ . ատենապետ Հալաճեան Բարսեղ էֆէնտի այս երկուշաբթի օր Յունաց պատրիարքարանը գնացին , ըստ սովորութեան Ս . Զատիկը շնորհաւորելու , եւ սիրալիր կերպիւ ընդունուեցան Ամեն . Յովակիմ Դ . Պատրիարքէն :

— Ս . Զատիկի կիրակի օրը Ներքին գործոց եւ Դատական ու Կրօնական գործոց նախարարութեան կողմէ յատուկ պաշտօնատարներ , ինչպէս նաեւ Պարսից դեսպանատան կողմէ թարգման մը գալով մեր ազգային Պատրիարքարանը , Ս . Զատիկը շնորհաւորեցին : Պատրիարքական Գեր . Տեղապահ Հայրն արժանաւայել պատուով հիւրընկալեց զանոնք :

— Նորընտիր Պատրիարք Ամեն . Յարութիւն Սրբազան՝ ի պատասխանի Կրօնական ժողովոյ շնորհաւորական հեռագրոյն , հեռագրած է առ Գեր . Ատենապետն՝ Խորէն Սրբազան , շնորհակալութիւն յայտնելով ժողովոյ շնորհաւորութեանց համար :

— Ստոյգ աղբիւրէ կը լսենք թէ ի հաշիւ Երուսաղեմայ պարտուց երեքական զրուշի յաւելումն արդէն եղած է գաւառաց մէջ , և այս տարուընէ կը հաւաքուի :

Ելմտական նախարարութեան կողմէ այս նկատմամբ բացօթոյ հրահանգներ ղրկուած են գաւառային իշխանութեանց : Նախարարութիւնն , ի մէջ այլոց , հրամայած է որ ի հաշիւ Երուսաղեմայ պարտուց հաւաքուող երեքական զրուշի գումարն առանձին պահուի , առանց խառնուելու կառավարական տուրքին հետ : Ելմտական նախարարու-

թեան զեկուցման վրայ , Երուսաղեմայ պարտուց նորակազմ Յանձնաժողովն հեռագրած է Երուսաղեմայ Ս . Պատրիարքին թէ երեքական զրուշի հաւաքումն սկսած է արդէն :

— Նորընտիր Ս . Պատրիարք Հօր ընդունելութեան համար հանգիստաւոր գործողութեանց հսկելու պաշտօնով Քաղ . ժողովոյ կողմէ կարգեալ Յանձնախումբն , Ազգ . ժողովոյ Ատենապետաց դիւանին և Տնտեսական խորհրդոյ ներկայացուցչին հետ համագումար նիստ ընելով շարժուս , հարկ դատուած նախապատրաստական կարգագրութիւններովն զբաղեցաւ , և որոշեց որ հրաւիրակը ոչ թէ յերուսաղէմ , այլ մինչեւ Իզմիր երթան , Ամեն . Յարութիւն Ս . Պատրիարքը դիմաւորելու համար :

Ըստ որոշման նոյն Յանձնախմբի , Պատրիարքական Գեր . Տեղապահ Հայրըն յատուկ թագրերով խնդրեց Բ . Դռնէն որպէս զի Ս . Պատրիարք Հայրը Կ . Պոլիս բերելու համար չողենաւ մը յատկացնէ Ազգ . Պատրիարքարանի տրամադրութեան ներքեւ , ինչպէս Բ . Դրան գովելի սովորութիւնն է այսպիսի պարագայից մէջ :

— Այնթապի թաղ . խորհուրդն Ազգ . Պատրիարքարանի ուշադրութիւնն հրաւիրած է ուսիրողութեան վրայ թէ , մինչդեռ տեղական կառավարութիւնըն յանուն հասարակաց կրթութեան տասանորդական տրոց վրայ յաւելում մը ընելով՝ դրամ կը գանձէ առ հասարակ ամեն հպատակներէ , ոչինչ կը վճարէ Հայոց վարժարանաց տեսչութեանց , և թէ յանուն արդարութեան հաւասար բաշխում մը մեծապէս պիտի օգնէ տեղւոյն ազգային վարժարանաց նիւթական ապահովութեան ու յառաջագիմութեան :

— Ազգային ժողովոյ դադարեալ և պա-
կասեալ երեսփոխանաց տեղ նոր ընտրու-
թեան հրահանգ զրկուեցաւ երէկ Ազգ.
Պատրիարքարանէն մայրաքաղաքիս թաղե-
րուն, որպէս զի փութացնեն երեսփոխանա-
կան ընտրութիւններն, մինչեւ ժողովոյ յա-
ռաջիկայ շրջանի բացման հասցնելու համար:

ԱԶԳ. ՀԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան
Ընդհ. ժողովն յարտաւոժօրնիստ գումարեցաւ
անցեալ չորեքշաբթի, մարտ 20, խորհրդա-
ծութեան առարկայ ընտրելով իւր յատուկ
վարժարանաց պայմանեալ ծախքերն, ինչ-
պէս նաև այն պարտաւորութիւնը, զոր իւր
Հիմնական Կանոնագրութեան համաձայն
ստանձնած է նպաստել այլ և այլ գաւա-
ռային վարժարանաց: Ընկերութիւնս յա-
ջողած է արդէն իւր օժանդակութեամբն
գոհացնել մի քանի դպրոցներ և ոմանց նը-
կատմամբ բանակցութեան մէջ է: Սակայն
իւր այս կարեւոր ձեռնարկն յարատեւ ար-
դիւնաւորելու և Ընկերութեան ապագայն
ապահովելու ջանիւք, ժողովն յետ երկար
խորհրդածութեանց հարկ անհրաժեշտ դա-
տեց մի դաշտային հանդէս տալ յառաջի-
կայ ամառ, Յուլիս 15ին, ի Պէոյիւքտէրէ:

Հանդիսին մանրամասնութիւնն և Յանձ-
նաժողովոյ Պատ. Տնարց և Տիկնանց ան-
ուանքը պիտի հրատարակուին ի մետոյ:

Բերա, 26 մարտ 1885

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳՐԱՆՈՒՐԲ

ԿՈՒԻԻ ԱՖՂԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽՈՅ ՎՐԱՅ

Լոնտոն, 9 ապրիլ

Նրեսփոխանական ժողովոյ այս երեկոյ-
եան նստին մէջ, Պ. Կլատտոն՝ աֆղան և
ռուս յառաջապահից միջեւ տեղի ունե-
ցած կռուոյ մը վրայ ելած հարցապնդման
մը պատասխանելով՝ հաստատեց թէ գէթ,
ըստ երեւութից, աֆղան զօրքերն ի
կռիւ գրգռած չէին Ռուսերը: Յետոյ յա-
րեց. «Այս մասին բացատրութիւններ խնդ-

րեցինք ի Բեդրսպուրկ, բայց այս խնդրա-
նաց ռուս կառավարութեան հասնելէն ա-
ռաջ, Պ. Կիրս երէկ արդէն յոյս յայտնա-
ծէր անդլիական դեսպան Սըր Է. Թորնթոնի
թէ այդ ցաւալի միջադէպ չպիտի արգե-
լու Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ բանակցու-
թեանց շարունակումն:»

Լոնտոն, 9 ապրիլ

Պ. Կլատտոն այս երեկոյ բացատրու-
թիւններ առաւ Երեսփ. ժողովոյ մէջ, ո-
րոցմէ կ'երեւի թէ ռուս զօրքերն, յետ գը-
րաւելոյ զԲէնձտէ, քաջուած են իրենց առ-
ջի դիրքերուն: Աֆղանք ազդու դիմադրու-
թիւն մ'ըրին, բայց յաղթուեցան մեծ կո-
րուսաներ կրելով: Անգլիացի սպայք չմաս-
նակեցան ձակառամարտին:

Անգլ. կառավարութեան ստացած տե-
ղեկագիրը կը հերքէ Ռուսաց առարկութիւ-
նը թէ Աֆղանք գրգռեցին կռիւը: Չարն
Անգլիոյ դեսպանին ցաւ յայտնեց այս ցա-
ւալի ղէպքի վրայ:

(Այս հեռագրէ կ'երեւի թէ, Քոմարոֆ
զօրավարը, Բուլ-Ի-Խիստի երթալէ յետոյ,
Բէնձտէի վրայ յարձակած և յաջողած է
տիրել, բայց ապա ետ քաջուած է:)

Փարիզ, 9 ապրիլ

Չինաստան հաւանած է հաշտութեան
նախնական պայմանաց:

ՎՐԻՊԱԿ

Մասիսի վերջնութեւ և վերջին թիւերով հրատա-
րակեալ «Կրթական» յօդուածին մէջ հետեւեալ վը-
րիպակները սպրդած են.

Էջ	Տող	Սխալ	Ուղիւ
794	24	չստ կը խմեն	ջուր կը խմեն
795	9	տիւրակեցութենէ	դիւրակեցութենէ
»	42	իմաստական	իմաստակական
798	37	յոտից ցգլուէս 'գինք	յուզեց 'գինք
»	45	երկնալ	երթալ
»	20	պարտաստ էին	պարտաւոր էին
»	42	որջերուն մէջ ապրող	որջերուն մէջ մտնող
799	8	իւր պատիժ կրե- լու համար	իւր պատիժ կրելու համար: Պ. Կոտ- Ֆօրտ մեկնած էր Չուիցերի ճամբոր- դելու համար: գեղջուկ.

818 6 գեղջ.

Խ Ա Ր Ի Ս Խ

ԿԵՆԱՅ, ԵԿԱՄՏԻՑ ԵՒ ՕԺՏԱՅ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԻ
Ի Վ Ի Ե Ն Ն Ա

Գործողութիւնք 1884 Դեկտեմբեր ամսուն

Այս ամսուն մէջ ստացուած և ստորագրուած են 879 նոր մուրհակներ (բոլիս) որք
կը կազմեն 5,120,387.50 Փրանք ապահովագրեալ գրամագլուխ .

Բաժիններու գանձումն	806.315	»
Վճարումն մահուանց առթիւ	110,807	»

Ամփոփումն 1884 տարւոյ գործողութեանց

Ընկերութիւնն ստորագրած է 7,940 մուրհակներ որք ի միասին կը կազմեն
43,545,782.50 Փրանք ապահովագրեալ գրամագլուխ .

Բաժնոց գանձումներ 8,755,257.50 Փրանքի բարձրացած են

Վճարումներ մահուան առթիւ 1,667,077.50 Փրանք :

Իւր հիմնարկութենէն ի վեր , ընկերութիւնը վճարած է


Մահուանց առթիւ	32,237,662.50 Փր.	} Համագումար
Օժտմանց առթիւ (1871-1884)	67,511,262.50 »	

	99,808,925 Փրանք
--	------------------

Թուրքիոյ համար ընդհանուր ներկայացուցիչ

ՄՈՐԻՍ ՊԷՐՔՁԻ


Գրասենեակք Ղալաթիա , Վոյվոտա փողոց , Թիւ 26 գերմանական Թղթաւան վրայ :



Ս. Ս. Մինասեան և Ընկերաց Ամերիկեան Վաճառատան մէջ կը ծախուին
Ամերիկայի Երկրագործական գործիքներ : Զանազան տեսակ Արօրներ , Մարա-
ցորեն վար տուող գործիք , մեծ և փոքր : Յորեն մաղելու գործիք մեծ և փոքր
Գլխիկ և խոտ ջարդող գործիք , Զանազան գործիքներ բանեցնելու համար ձի-
ով գալձող մեքենայ : Պարտեղի գործիքներ : Հրգեհի փոքր ջրհան և այլ զա-
նազան Ամերիկայի ջրհաններ : Այլ և այլ պտղոց ջուրերը հանելու գործիք :
Զիւրու և արջառաց կերը մանրելու աղօրիք , և այլն , և այլն :
Ամերիկեան Վաճառատուն ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ :

ՍԷՅՏԵԼ ԵՒ ՆԱՒՄԱՆ ՏՐԷԶՏԱ. [ՍԱՔՍՈՆԻԱ]

Ներդրույ մէջ կա-
րի մեքենայ չինող
ամենամեծ գործա-
րանն :




Գործարանատեարք
«Օրէթիւս» Սափահա-
րէճի» կոչուած հրու-
շակաւոր ձեռքի մե-
քենային :

ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ

Ընտանեաց համար
ձեռքով և ոտքով բա-
նող մեքենայք :

ՆԱՒՄԱՆ մեքենայն B

Մոտիսթներու և
դերձակներու համար
մեքենայք :



Այս մեքենայն իւր թելին տակ
լայնիկէկ տեղ մ'ունի, ինչպէս նաե-
ւ ամեն տեսակ կարերու համար նո-
րանոր գործիքներ, և շատ զիւ-
րութեամբ լաւ

ՕՂԱԿ

չինելու համար մասնաւոր գոր-
ծիք մը :

Այդ մեքենային համար աշ-
խարհիս ամեն կողմ արտօնու-
թիւն առնուած է :

Ծանօթ. — Այդ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ չտեսած՝ կարի մեքենայ մի՛ գնէք :

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆ



ԳՈՐԾԱՐԱՆԻՆԸ ԶՐԻ ԿՈՒՍՈՒՅՈՒՒ

Ընտանեաց համար օղակի գործիք զՆ 75
Դերձակաց » » » » 125

Թուրքիոյ և Պուլկարիոյ համար
գործակալ և մթերանոցապետ

ԷՄ. Ժ. ՄԷՐՃԱՆՕՖ

Կ. Պոլիս, Հաճօքուլ խան, թիւ 47

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆ



Ամեն տեսակէն 1500 մեքենայ միշտ պատրաստ կը գտնուին :

Սրտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻԼ ԼՐԱԳՐՈՅ